«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՂՂԿ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2016

ՆԱԽԱԲԱՆ

«Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՖԿՀՊԻ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախաձեռնությամբ և նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 4 տեղացի և 1 միջազգային փորձագետից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանն, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) իրականացնել փորձագիտական գնահատում՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու բուհի հավակնությունների տեսանկյունից:

Սույն զեկույցն անդրադառնում է ՖԿՀՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությանը՝ ըստ պետական հավատարմագրման չափանիշերի ու չափորոշիչների, և գործընկերային գնահատմանը՝ ըստ ԵԲԿՏ ինտեգրվելու բուհի հավակնությունների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 10

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 17

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 17

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 17

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 21

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 21

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 22

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 24

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 27

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 31

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 35

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 39

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 42

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 46

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 48

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 51

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 55

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 55

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 57

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 59

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 62

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 63

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՖԿՀՊԻ փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ՖԿՀՊԻ-ն ոլորտի միակ պետական մասնագիտացված բուհն է ՀՀ-ում և միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքի, մատաղ սերնդի դաստիարակման ղեկավար դերի համար, մասնագիտական կարիերային և հարատև ուսումնառությանը՝ գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համապատասխան:

2016-2020թթ. ռազմավարական ծրագրում ՖԿՀՊԻ-ին հստակեցրել է առաքելության սահմանումը՝ նպատակաուղղելով այն բարձրագույն մասնագիտական կադրերի պատրաստմանը, երկրում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացմանն, առողջ ապրելակերպի ձևավորմանը, մարզական գիտելիքների ստեղծմանն ու տարածմանը, ժամանակակից աշխատաշուկայի պահանջները բավարարող առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական որակյալ ծառայությունների մատուցմանը:

Դրական է, որ ՖԿՀՊԻ-ն իր առաքելությունն իրականացնելու նպատակով մշակել է զարգացման ռազմավարական ծրագիր, ռազմավարական նպատակների կատարման համար սահմանվել է իրականացման ժամանակացույց-պլան, որտեղ ներկայացված են ռազմավարական խնդիրների իրագործման համար պլանավորված միջոցառումներն, իրականացման ժամկետները, պատասխանատուները:

ՖԿՀՊԻ-ն իր առաքելությունը, նպատակները և խնդիրները սահմանելու համար ունի ներքին և մասամբ արտաքին շահակիցների ներգրավման շրջանակ: Այդուհանդերձ, առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման համընդհանուր մոտեցում բուհում առկա չէ, ինչը խոչընդոտում է ձեռքբերված արդյունքների թիրախավորված գնահատմանը և դրանց հիման վրա բարելավումների իրականացմանը:

ՖԿՊԻ-ում առկա չէ ռազմավարությունն արտացոլող կազմակերպական կառուցվածք: Չնայած այն հանգամանքին, որ 2014-2015թթ. բուհը կառուցվածքային փոփոխություններ է կատարել, այնուհանդերձ կազմակերպական կառուցվածքը ճկուն չէ, տարբեր ստորաբաժանումներում որոշ գործառույթներ կրկնվում են, հորիզոնական կապերը թերի են: Տարբեր կազմակերպական ստորաբաժանումների պատասխանատվության շրջանակը և վերջիններիս միջև առկա փոխհարաբերություններն ակնհայտ չեն: Վարչական ապարատում առկա է միևնույն անձի՝ մի քանի պաշտոնների միաժամանակ վարման պրակտիկա:

ՖԿՀՊԻ-ն առաջնորդվում է իր մշակած հնգամյա երկարաժամկետ պլանով: Սակայն բացակայում են դրանց իրականացման տրոհումը միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի, տարեկան գործունեության պլանավորումն առավել համապատասխանում է բուհի ընթացիկ գործընթացների պլանավորմանը:

---

[1]ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՐՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Բուհը փորձում է ներքին շահակիցներին մասնակից դարձնել որոշումների կայացման գործընթացներին, սակայն արտաքին շահակիցների հետ շփումները համակարգված չեն: ՄՈՒՀ-ի բոլոր կառավարման մակարդակներում և ստորաբաժանումներում գործում է հաշվետվողականության մեխանիզմը, սակայն դրա գնահատման գործիքների, գործառույթների արդյունավետության քննադատական վերլուծությունները բացակայում են: Փաստացի ՄՈՒՀ-ում բացակայում է արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրման գործընթացը: ՖԿՀՊԻ-ում ՊԻԳԲ շրջափուլն ամբողջովին չի գործում, բացակայում են շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական հրապարակումները և դրանց գնահատող մեխանիզմները:

ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը մշակված են ՖԿՀՊԻ-ի առաքելությանը համապատասխան, ընդ որում, համապատասխանությունն ավելի հստակ է 2016-2020թթ. ՌԾ-ում սահմանված առաքելության նկատմամբ: ՄԿԾ-ների կրթական վերջնարդյունքներն ընդհանուր առմամբ համահունչ են ՈԱՇ-ին, սակայն դեռևս հստակեցման և լրամշակման կարիք ունեն: Փաստացի ՖԿՀՊԻ-ն չունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ու ակնկալվող արդյունքների հստակ քարտեզագրում: ՖԿՀՊԻ ուսանողների գնահատման մեթոդներն ընդհանուր առմամբ համապատասխան են ուսումնառության վերջնարդյունքներին:

ՄՈՒՀ-ը մտահոգ է ուսանողների արդյունավետ ուսումնառության կազմակերպմամբ: Ուսանողների ներհոսքն ապահովվում է ավագ դասարանների աշակերտների, քոլեջների շրջանավարտների և զորացրվող զինծառայողների շրջանում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների միջոցով: ՄՈՒՀ-ը փորձում է կիրառության մեջ դնել ուսանողների կարիքների վերհանման գործիքներից մեկը՝ հարցումները, սակայն այդ կարիքների բավարարմանն ուղղված հետագա գործընթացները կանոնակարգված չեն: ՖԿՊՀԻ-ն ուսանողներին տրամադրում է օժանդակություն և ուղղորդում: ՄՈՒՀ-ի ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են կրթական միջավայրից և կրթության կազմակերպումից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՖԿՀՊԻ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության, գմահատման քաղաքականություն և ընթացակարգեր: Այն փաստը, որ ինստիտուտում գործող դասախոսական կազմի ավելի քան 90%-ն աշխատում է հիմնական պայմանագրային հիմունքներով, ունի մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան որակավորումներ և սպորտային կոչումներ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՄՈՒՀ-ում հաշվի է առնվում դասավանդողների մասնագիտական որակներն, ուղղվածությունը և երաշխավորվում է ՊԴ կազմով ապահովվածության կայունությունը: Դրական միտում է նաև այն, որ բուհը ՊԴ կազմը ձևավորելիս հիմնականում օգտվում է սեփական կադրային բազայից (66%)՝ համալրումն իրականացնելով ասպիրանտուրայում սովորող երիտասարդ կադրերի ընտրությամբ: ՖԿՀՊԻ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, այնուամենայնիվ, փորձագիտական խմբին մտահոգում է մասնագիտական վերապատրաստումները կադրային ռեսուրսի շարունակական զարգացման և շարժունության տեսանկյունից: Դրական է, որ ՄՈՒՀ-ում մշակվել է աշխատակիցների առաջընթացի ապահովման և խրախուսման ընթացակարգ, այդուհանդերձ այն նոր է շրջանառության մեջ մտել և արդյունավետությունը թերևս վերլուծված չէ:

ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտը և հետաքրքրություններն արտահայտող ռազմավարական նպատակներ, իրականացվում է հետազոտություն ոչ միայն ինստիտուտի, այլ նաև ՀՀ օլիմպիական և սպորտի կոմիտեների հետաքրքրությունների շրջանակում՝ դրանով իսկ վկայելով ոլորտում գիտահետազոտական կենտրոն դառնալու միտումը: Փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՖԿՀՊԻ-ն ունի այդ ոլորտում երկարաժամկետ ռազմավարություն և հետաքրքրություններն արտահայտող կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրեր: Բուհն օժանդակում է դասախոսների և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, կիրառում է մեխանիզմներ հետազոտական և կրթական գործընթացների փոխկապակցման համար: Բուհն անելիքներ ունի հետազոտական գործունեության միջազգայնացման առումով, քանի որ եզակի են միջազգային գրախոսվող ամսագրերում

հրատարակումները, չեն իրականացվում միջազգային հետազոտական փոխանակման ծրագրեր և համատեղ հետազոտություններ:

ՖԿՀՊԻ-ի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները ներկայում բավարար են մասնագիտական կրթության իրականացման համար: Փորձագիտական խումբն այցի ընթացքում համոզվեց, որ ընթացքի մեջ են կրթական միջավայրի ընդլայնման, ենթակառուցվածքների բարեկարգման և վերանորոգման աշխատանքներն, այնուամենայնիվ շենքային տարածքների զգալի մասը, նյութատեխնիկական բազան դեռևս արդիականացման և վերազինման անհրաժեշտություն ունեն:

ՖԿՀՊԻ-ի ֆինանսավորումը կատարվում է 2 ուղղություններով՝ բյուջետային և արտաբյուջետային, որն էլ հիմնականում ձևավորվում է ուսանողների վարձավճարներից: Կարելի է արձանագրել, որ ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսները սահմանափակ են և չեն բավարարում ՌԾ-ով որդեգրած խնդիրների լիովին իրագործման համար, այնուամենայնիվ փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՄՈՒՀ-ը մի կողմից փորձում է վարել ռեսուրսախնայող քաղաքականություն, իսկ մյուս կողմից՝ ընդլայնել ֆինանսական հոսքերը՝ խնդիրը մասնակիորեն լուծելով դրամաշնորհային ծրագրերի դիմելու քաղաքանության և բարերարների ներդրումների միջոցով:

Ինստիտուտն ունի արտաքին և ներքին հաշվետվողականության ձևավորված համակարգ: Հասարակության առջև իր գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունն ու հասանելիությունը ՄՈՒՀ-ն ապահովում է պաշտոնական կայքի, թերթերի և իր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տրամադրվող տեղեկատվության միջոցով: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարծում է, որ կայքում տեղադրված տեղեկատվությունը համալրման կարիք ունի: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՖԿՀՊԻ-ն հաջողությամբ իրականացնում է հասարակությանը գիտելիքներ փոխանցելու գործառույթը՝ մատուցելով լրացուցիչ կրթական, խորհրդատվական և բարեգործական ծառայություններ: Հասարակության հետ հետադարձ կապի ապահովման նպատակով ՖԿՀՊԻ-ում գործում են մեխանիզմներ և ստորաբաժանումներ, սակայն վերջիններիս արդյունավետ գործունեության մասին դատողություններ անել հնարավոր չէ համապատասխան վերլուծությունների բացակայության պատճառով:

ՖԿՀՊԻ-ն միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու առումով սահմանել է ռազմավարական նպատակ, և դրա իրագործման համար ձևավորել համապատասխան բաժին իր կանոնադրությամբ, սակայն բաժնի գործունեությունը հիմնականում սահմանափակվում է սփյուռքահայ ուսանողների և ասպիրանտների ընդունելությամբ և ուսումնագիտական գործընթացը կազմակերպելով, ինչը վկայում է, որ ՄՈՒՀ-ում չկա միջազգայնացման ռազմավարության ամբողջական և կանոնակարգված քաղաքականություն: ՖԿՀՊԻ-ն միջազգայնացմանն ուղղված քայլեր է ձեռնարկում, սակայն դեռևս չունի փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր: ՖԿՀՊԻ-ն համագործակցում է տեղական կառույցների հետ, սակայն միջազգային հաստատությունների հետ համագործակցության արդյունվետության փաստարկները եզակի են:

ՖԿՀՊԻ-ն կարևորում է կրթության որակը և որակի ապահովումն, այնուամենայինվ այս առումով բուհում դեռևս չկա համակարգային մոտեցում և ընդհանրական որակի մշակույթի ընկալում: Որակի ապահովման գործընթացների կազմակերպման համար տրամադրվել են մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, մշակվել են մի շարք փաստաթղթեր, սակայն գործողությունների պլանավորման տեսանկյունից առկա է հստակեցման անհրաժեշտություն: ՖԿՀՊԻ-ում որակի ապահովման ներքին համակարգը կայացման փուլում է. իրականացվում են որոշակի գործընթացներ, սակայն թույլ է հատկապես արտաքին շահակիցների մասնակցությունը: Բուհի որակի ապահովման գործընթացները կանոնակարգող մեխանիզմների և գործիքակազմի գնահատման բացակայությունը հնարավորություն չի տալիս գնահատել որակի ապահովման գործընթացների ազդեցությունն ինստիտուտի, որպես ամբողջություն, գործունեության բարելավման վրա:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ

1. ՄՈՒՀ-ի ուղղվածությունն առավել հստակ մատնանշող վերաձևակերպված առաքելություն:
2. ՄՈՒՀ-ի առաքելությանը և նպատակներին համահունչ ռազմավարական պլանավորում:
3. Ներքին շահակիցների՝ իրենց վերաբերող որոշումների կայացմանը մասնակցության բավարար մակարդակ:
4. ՄՈՒՀ-ի առաքելությանը համապատասխան ՄԿԾ-ների մշակում:
5. Ուսանողների գնահատման վերջնարդյունքահեն մոտեցում:
6. Ուսանողներին՝ իրենց կրթական կարքիների բավարարման համար համապատասխան օժանդակության տրամադրում:
7. Անհրաժեշտ մասնագիտական որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով ապահովվածություն և կայունություն:
8. Ոլորտին հատուկ հետազոտական գերակայությունների առկայություն, հետազոտությունների իրականացում ոչ միայն ինստիտուտի, այլ նաև ՀՀ օլիմպիական և սպորտի կոմիտեների հետաքրքրությունների շրջանակում:
9. Հետազոտական և կրթական գործընթացների փոխկապակցման մեխանիզմների առկայություն:
10. Որակի ապահովման քաղաքականության և հաստատված ընթացակարգերի առկայություն:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ

1. Ռազմավարական պլանից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման բացակայություն:
2. Կառավարման և որակի ապահովման գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի գնահատման և բարելավման գործընթացների բացակայություն:
3. Ինստիտուտի գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության ցածր մակարդակ:
4. Ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության բացակայություն:
5. Բենչմարքինգի (համանշման) իրականացման հստակ մշակված համընդհանուր մոտեցումների, իրականացման մեթոդաբանության բացակայություն:
6. Ուսանողների ընդունելության թվաքանակի կանխատեսման բացակայություն:
7. ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման ցածր մակարդակ:
8. ՄՈՒՀ-ի միջազգայնացմանը, փորձի փոխանակմանը և զարգացմանը նպաստող միջավայր ստեղծելու համակարգված քաղաքականության բացակայություն:
9. Միջազգային հաստատությունների հետ համագործակցության արդյունավետության և օտար լեզվի իմացության ցածր մակարդակը:
10. ՄՈՒՀ-ում որակի ապահովման մշակույթի չձևավորվածություն:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առաքելությունը և նպատակները

1. Վերաձևակերպել բուհի առաքելությունը՝ դարձնելով այն առավել մատչելի շահակիցների ընկալման համար:
2. Ընդլայնել արտաքին շահակիցների ընդգրկվածությունը ՌԾ մշակման, իրականացման գործընթացում:

3. Պարբերաբար գնահատել շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը՝ կատարելագործելով արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները:
4. Նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների արդյունավետության գնահատման ցուցիչները դարձնել չափելի:

Կառավարումը և վարչարարությունը

5. Վերանայել ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքը՝ հստակեցնելով բոլոր ստորաբաժանումների փոխկապակցվածությունը և գործառնական փոխհարաբերությունները, ամրագրել ինստիտուտի բոլոր աշխատակիցների գործառույթները:
6. Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն համահունչ բուհի ՌԾ-ին՝ ուղղված համապատասխան կադրային ռեսուրսներով ապահովվածությանը:
7. Ուսումնասիրել և վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին գործոնները, կիրառել ուսումնասիրության չափելի գործիքներ, մշակել ինստիտուտի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար անհրաժեշտ հավաստի տվյալների հավաքագրման ընթացակարգեր, գնահատման մեխանիզմներ:
8. Մշակել կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների իրականացման ծրագրեր՝ նպատակաուղղված ՌԾ-ի ժամանակացույցի կատարմանը, ինչպես նաև մշակել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների իրականացման, մշտադիտարկման և գնահատման հստակ մեխանիզմներ և գործիքակազմ և արդյունավետության ցուցիչներ:
9. Բարելավել որոշումների կայացման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմները:
10. Կատարելագործել գործող ՄԿԾ-երի և իրականացվող գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառումը գնահատող մեխանիզմների համակարգը:
11. Հստակեցնել ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունն՝ ըստ ռազմավարական գերակայությունների:
12. Ստեղծել ռիսկերի կառավարման համակարգ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

13. Սահմանել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի տարբեր ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ բոլոր ՄԿԾ-ներում:
14. Ապահովել դասավանդման և ուսումնառության մեթոդների կապն ուսումնառության վերջնարդյունքերի և գնահատման մեթոդների հետ՝ ներդնելով ուսանողակենտրոն մոտեցումներ:
15. Մշակել գիտելիքների գնահատման չափանիշներ՝ ելնելով յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունից:
16. Մշակել ակադեմիական ազնվությունն ապահովող գործիքներ:
17. Ներդնել կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգի լավագույն փորձը:
18. Արմատավորել ՄԿԾ-ների մշակման, պարբերաբար մշտադիտարկման, դրանց իրականացման արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացներն ինստիտուտում՝ ներառելով շահակիցներին և վերհանելով աշխատաշուկայի պահանջները:
19. Տարածել բուհի ներսում առկա ՄԿԾ-ի մշակման և վերանայման, արդիականացման ու բարելավման լավագույն փորձը:
20. Ներդնել ՄԿԾ-ների մշակման միջառարկայական մոտեցումներ:

Ուսանողները

21. Մշակել ՖԿՀՊԻ -ի ուսանողի ուղեցույց:
22. Վերափոխել կարիերայի կենտրոնի աշխատանքն՝ այն նպատակաուղղելով աշխատաշուկայի կարիքների հետազոտմանը, շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրությանը և նրանց հետ կայուն հետադարձ կապի ապահովմանը:
23. Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգերն ու մեխանիզմները՝ մասնակից դարձնելով ուսանողին:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

24. Սահմանել և փաստաթղթավորել կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող կոմպետենցիաները:
25. Մշակել դասախոսների կարիքների վերհանման մեխանիզմներ, աջակցել դասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործմանը, նպաստել ոլորտում գիտական աստիճան ունեցող դասախոսների աճին:
26. Մշակել դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի պաշտոնի անձնագրեր:
27. Սահմանել վարչական աշխատակազմի ձևավորման նորմատիվներ:
28. Իրականացնել ուսումնաօժանդակ կազմի կատարողականի գնահատում:

Հետազոտությունը և զարգացումը

29. Հստակեցնել ռազմավարական ծրագրում հետազոտական ոլորտի առաջընթացի ցուցիչները:
30. Խթանել հետազոտությունների միջառարկայական մոտեցումը և դրան համապատասխան սահմանել ներբուհական հետազոտության նոր առաջնահերթություններ:
31. Դիտարկել գիտահետազոտական և գիտատեղեկատվական գործունեությամբ զբաղվող ստորաբաժանումների միավորման նպատակահարմարությունը:
32. Աշխատանքներ տանել միջազգային հետազոտական համագործակցության և հետազոտական ցանցի ստեղծման ուղղությամբ:
33. Ավելացնել միջազգային գրախոսվող և բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրատարակումների քանակը:
34. Մշակել գիտահետազոտական աշխատանքների սոցիալական ազդեցության գնահատման գործիքներ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

35. Ընդլայնել ֆինանսական հատկացումներն՝ ուղղված նյութատեխնիկական բազայի թարմացմանը և նորագույն սարքավորումներով հագեցմանը:
36. Ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարել ըստ ռազմավարական պլանի:
37. Իրականացնել ֆինանսատնտեսական աուդիտ:
38. Գնահատել կրթական ռեսուրսների արդյունավետությունը, կիրառելիությունը և հասանելիությունը գնահատող գործիքների արդյունավետությունը:
39. Գնահատել լսարանների տարեկան զբաղվածությունը և օպտիմալացնել ռեսուրսների բաշխումը (խնայելով ջեռուցման և այլ ծախսերը):
40. Ստեղծել համապատասխան միջավայր հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կրթության կազմակերպման համար:

Հասարակական պատասխանատվությունը

41. Գնահատել հաշվետվողականության համակարգի արդյունավետությունը:
42. Մշակել և ներդնել արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ֆորմալ մեխանիզմներ:
43. Վերլուծել հասարակության հետ հետադարձ կապի գործող մեխանիզմների արդյունավետությունը:

44. Մշակել հասարակության համար ցկյանս ուսումնառության ծրագրեր սպորտի և ֆիզիկական կուլտուրայի ոլորտում, որոնք կարող են ընդլայնել ՄՈՒՀ-ի ֆինանսական մուտքերը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

45. Մշակել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը միտված համակարգված և ամբողջական քաղաքականություն և ռազմավարություն:
46. Մշակել միջազգային գործունեության արդյունավետությունը գնահատող չափելի ցուցիչներ:
47. Ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակը:
48. Իրականացնել դասախոսների և ուսանողների շարժունությանը նպաստող միջազգային փոխանակման ծրագրեր:
49. Ակտիվացնել և ընդլայնել միջազգային կառույցների և հաստատությունների հետ համագործակցությունը և դրա շրջանակը:
50. Բարելավել դասախոսների, ուսանողների անգլերեն լեզվի իմացության մակարդակը՝ վերանայելով դասընթացների ծրագրերը և մեթոդաբանությունը:

Որակի ներքին ապահովումը

51. Իրականացնել որակի ապահովման հաստատված քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատում:
52. Մշակել ՖԿՀՊԻ-ի որակի ապահովան գործընթացների կառավարման համար տրամադրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների գնահատման հստակ մեխանիզմներ:
53. Հստակեցել ՈԱ բաժնի գործառույթները:
54. Ընդլայնել որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը և գնահատել դրա արդյունավետությունը:
55. Մշակել կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:
56. Սահմանել և կիրառել տեղեկատվության հավաքագրման մեխանիզմներ, որոնք կձևավորեն անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման ներքին և արտաքին գնահատումների համար:
57. Իրականացնել գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման համար կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՑԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Միջազգային փորձագետը հույս է հայտնում, որ ընդհանուր զեկույցի այս հատվածը կառուցողական կերպով կծառայի ՖԿՀՊԻ-ի զարգացմանը:

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը ձգտում է ընդգրկվել Եվրոպական բարձրագույն կրթական տարածք: Տեղակայված լինելով մի երկրում, որը դուրս է եկել տնական կայունության ժամանակաշրջանից և ներկայումս տնտեսական ճգնաժամ և բավական խրթին բյուրոկրատական քաղաքականություն է ապրում, ՖԿՀՊԻ-ն ստիպված է հաղթահարել հայկական հասարակության, ինչպես նաև ամբողջ աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները:

Ունենալով ինստիտուցիոնալ ինքնավարություն, հաշվետվողականություն և ակադեմիական ազատություն՝ ՖԿՀՊԻ-ն, կարծես, զարթոնք է ապրում: Մոտ ապագայում

ինստիտուտը ստիպված կլինի դիմակայել դրսից եկող մարտահրավերներին, եթե ցանկանում է լինել արդյունավետ, հաջողակ և գոյատևել:

Հարկ է նշել, որ այս համատեքստում դիտարկումներ իրականացնելու գործընթացում, լեզվական խնդիրն ամենահիմնական խոչընդոտն է եղել: Թեև թարգմանությունն ապահովվել է, այնուամենայնիվ շատ փաստաթղթեր հասանելի էին միայն հայերենով:

Դիտարկումներ: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտն իր ռազմավարական ծրագրում ամրագրել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածք ինտեգրվելու ձգտումը: Որպես միջազգային փորձագետ՝ իմ դիտարկումները կկառուցեմ Բոլոնիայի գործընթացի ներդրման տարբեր գործիքների շուրջ: Երբ խոսքը վերաբերում է որակի ապահովմանը (ՈԱ), պետք է նշել, որ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մաս կազմող անդամ-երկրների մեծամասնությունը ներկայումս՝ 2015թ.-ին Երևանում կայացած նախարարների կոնֆերանսի հռչակագրով հաստատված Եվրոպական նոր ուղենիշների և չափորոշիչների ներդրման փուլում են: Սա նշանակում է, որ մինչ այս, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մաս կազմող երկրներում Բոլոնիայի գործընթացների ներդրումն իրականացվում էր Բուխարեստի հռչակագրի և 2005թ. Եվրոպական ուղենիշների և չափորոշիչների հիման վրա:

- **Բուհը Բոլոնիայի գործընթացը ներառում է ռազմավարական ծրագրում**

Բոլոնիայի բարեփոխումների ներդրումը կիսով չափ իրականացված է, և ինստիտուտը ներկայում գործունեություն է իրականացնում ՈԱ գործընթացների և ուսանողակենտրոն ուսուցման կառավարման և բարեփոխման գործընթացների ուղությամբ:

Ռազմավարական ծրագիրը հիմնականում շեշտադրում է որակի կառավարման արդյունավետությունը, որն իրականացնում է վարչական անձնակազմի վերապատրաստման, կառավարման մարմինների ինտեգրված գործընթացների և որոշումների կայացման համակարգի կիրառման միջոցով:

Միևնույն ժամանակ օրակարգում է ներինստիտուտական հենքի բարեփոխման անհրաժեշտությունը:

Երբ խոսքը վերաբերում է ուսանողակենտրոն ուսուցմանն, անհրաժեշտ է որոշումների կայացման գործընթացում ուսանողների մասնակցության բարելավում, ուսանողական խորհրդի դերակատարության հստակեցում և արտաքին ուսանողական կազմակերպությունների հետ կապերի ակտիվացում:

- **ՖԿՀՊԻ կիրառում է բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններ և կրեդիտային համակարգ**

Բոլոնիայի սկզբունքերի համաձայն՝ ՖԿՀՊԻ-ում իրականցվում է է 4+1՝ բակալավր-մագիստրատուրա կառուցվածքը, որն ամրագրված է ՀՀ կրթության մասին օրենսդրությամբ: Կրեդիտային հատկացումները դեռևս իրականացվում են տարեկան կտրվածքով՝ ունենալով կուրսից կուրս տեղափոխման բավական կարծր պահանջներ: Սա, իրականում, Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ չէ, այնուամենայնիվ, նման իրավիճակ կարելի է տեսնել ԵԲԿՏ-ի մաս կազմող շատ երկրներում:

Ուսումնական պլանն ուսումնական տարվա կտրվածքով կրեդիտների հատկացման ավանդական կառուցվածքն ունի, որն, իրականում, պարարտ հող չի նախապատրաստում ուսանողի անհատական հետագծի ճկունության, ինչպես նաև մասնագիտական և ոչ մասնագիտական առարկաների հարաբերակցության միջև:

ՖԿՀՊԻ-ում առկա են ընդունելության հստակ գործընթաց և պահանջներ:

- **Ուսումնական պլանի մշակումը ՖԿՀՊԻ-ում**

ՖԿՀՊԻ-ում կա երկու ֆակուլտետ, որոնցից մեկը՝ մանկավարժական ծրագրեր, իսկ մյուսը սպորտի և առողջության վերականգնման ՄԾԿ-ներ թողարկող ֆակուլտետն է: Դժվար է հասկանալ ֆակուլտետային կառուցվածքի տրամաբանությունն, ինչպես նաև ֆակուլտետում ՄԿԾ-երի փոխկապակցվածությունը:

Ուսումնական պլանը հիմնված է ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների վրա, բայց ուսուցման ակնկալվող վերջնարյունքների սահմանման մոդել առկա չէ ինստիտուտում: Որոշ ՄԿԾ-ներ բավական ընդհանրական են և հիմնված ավանդական առարկաների վրա (օր.՝ հասարակական գիտություններ), մինչդեռ որոշ մասն էլ խիստ մասնագիտական են (օր.՝ շախմատ):

Չի իրականացվում ուսումնական պլանի համակարգված վերանայում՝ հիմնված մշակված մեթոդի վրա՝ արտաքին շահակիցների ներգրավմամբ: Բուհը ոչ մի ապացույց չի ներկայացնում առ այն, որ ուսումնական պլանի մակարդակը, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները և դիպլոմները կապակցված են որակավորումների եվրոպական շրջանակին, որը բեկումնային է միջազգային համագործակցության, ինչպես նաև համապատասխան աստիճանի թափանցիկության և ՄԿԾ-ների որակի համար:

Առկա չէ ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների վավերացման արտաքին և միջազգային համակարգված գործընթաց:

ՖԿՀՊԻ կազմակերպում է հետբուհական կրթություն, որը չի դիտարկվել այցի ընթացքում:

Շրջանավարտները ստանում են դիպլոմի հավելված: Ինստիտուտը այլ դիպլոմների փոխճանաչման քաղաքականություն և գործընթացներ չունի:

Այցի ընթացքում պարզ չէր Ուսումնական բաժնի առաքելությունը և մասնակցությունն ուսումնական պլանների մշակման և ընդհանուր առմամբ կրթական գործընթացներում:

- **Հետազոտությունը ՖԿՀՊԻ-ում**

Բուհն ունի լավ մշակված առաքելություն, կառուցվածք և մեթոդաբանություն հետազոտության ոլորտում: Սահմանված են առաջնահերթությունները և որոշումների կայացման գործընթացները:

Հետազոտության քաղաքականությունը և տարբեր տարրերի ներդրումը՝ հետազոտության հարցերով պրոռեկտորի և Գիտական բաժնի պատասխանատվություններն են: Որոշումների կայացումը Գիտական խորհրդի պարտականությունն է: Հետազոտությունում ներառված են բոլոր ՄԿԾ-ները:

Երբ խոսքը վերաբերում է ռազմավարական ծրագրի հետազոտության ոլորտին, առկա է 4 առաջնահերթություն: Հետազոտության վերջնարդյունքները տարբեր տարակարգեր են ներառում՝ հրատարակումը և գիտական կոնֆերանսների մասնակցությունը համարելով հետազոտական գործունեության ամենակարևոր արդյունք: Առկա չէ անգլերենով հետազոտական արտադրանք: Հոդվածների ամփոփումները հրատարակվում են անգլերենով և ռուսերենով: Առկա չէ գիտելիքների փոխանցման ռազմավարություն:

Բուհը սահմանափակ սարքավորումներ ունի հետազոտական լաբորատորիաներում, իսկ SS գրեթե բացակայում է: Բուհում առկա չէ գիտական տվյալների բազա:

Լաբորատորիաներն ունեն փոքր գրադարան, որը կապակցված չէ բուհի գրադարանին:

Ուսանողները ներգրավված են գիտական կոնֆերանսների կազմակերպման գործընթացում: Պարզ չէ, թե ինչպիսի քաղաքականություն է գործում ասպիրանտների ուղղությամբ:

Բուհը սպորտի պատմության բավական հարուստ թանգարան ունի: Այդուհանդերձ, թանգարանի հասարակական և դիդակտիկ ողջ ներուժն ամբողջովին իրացված չէ:

- **ՖԿՀՊԻ-ն ներդրել է ՈԱ համակարգ, որը դեռևս կայացման փուլում է**

Հաստատությունը մեծ ջանքեր է ներդրել ՈԱ հասկացությունների և մեթոդների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման ուղղությամբ՝ ՈԱ ձեռնարկի հրատարակման միջոցով:

Բուհն ունի որակի կառավարման կենտրոնական բաժին և որակի կառավարման կառուցվածք (Որակի կառավարման հանձնաժողով, որում ներգրավված են բոլոր ՄԾԿ-ները):

Որակի ապահովման հիմնական խնդիրն այն է, որ ինստիտուտը չունի պրոֆիլային առաքելություն: Որպես վերոգրյալի հետևանք՝ առկա չէ որակի վերաբերյալ տեսլական և ինստիտուցիոնալ ռազմավարության իրական հենք: ՈԱ գործընթացներում ուսանողների և անձնակազմի ներգրավածությունը սահմանափակվում է վերջիններիս շրջանում իրականացվող հարցումներով: Արտաքին շահակիցների հետ պարբերական աշխատանք չի իրականացվում:

Բուհն ունի անձնակազմի գնահատման մշակված քաղաքականություն, որն իրականացվում է ուսանողների շրջանում հարցումների և դասալսումների արդյունքում: Անձնակազմին տրվում է համապատասխան հետադարձ կապ, իսկ վերջիններիս վերապատրաստումները ՈԱ կառավարման մշակված գործընթացներից են:

Ուսանողները ներգրավված են ինստիտուտի կառավարման գործընթացում:

- **Ուսանողների թվաքանակը նվազում է**

Վերոգրյալն իրական մարտահրավեր է ՖԿՀՊԻ-ի համար, քանզի վտանգվում է հաստատության ֆինանսական կայունությունը: Սրա արդյունքն է նաև ՄԿԾ-ներում ներգրավված ուսանողների և անձնակազմի փոքր թվաքանակը, որը կարող է բացասաբար անդրադառնալ ՄԿԾ-երի և հետազոտության որակի վրա: Ինստիտուտի ղեկավարությունը տեղյակ է խնդրին և քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ:

- **Միջազգայնացման բացակայություն**

Բուհի միջազգային հարաբերությունները սահմանափակվում են սփյուռքահայ ուսանողների հետ տարվող աշխատանքներով:

Չնայած սպորտն ինքնին համաշխարհային է, այնուամենայնիվ բուհը միջազգային գործընթացներ չի իրականացնում, այնպես ինչպես նախատեսված է Բոլոնիայի գործընթացում: Չկան արտերկրի ինստիտուտների հետ համագործակցության ակտիվ համաձայնագրեր: Առկա չէ ուսանողների և դասախոսների կայուն և ինտենսիվ շարժունություն արտերկրում գործունեություն ծավալող գործընկեր հաստատությունների հետ: Բուհում առկա է միջազգային բաժին, որը զբաղվում է միջազգային ուսանողների հարցերով: Նույն գրասենյակը նաև կազմակերպում է անգլերենի դասընթացներ:

- **Ուսանողակենտրոն ուսուցում, սոցիալական երկխոսություն**

Ուսանողները ներգրավված են ՖԿՀՊԻ-ի կառավարման բոլոր կառույցներում, իսկ Ուսանողական խորհուրդն ունի իր գրասենյակն ու գրադարանը:

Ուսանողակենտրոն ուսուցումը սպորտի մենաշնորհն է, քանզի այս ոլորտում առկա են մեծ քանակության գործնական դասընթացներ, որոնք պահանջում են անհատական մոտեցում

և ուսանողների ներգրավում առօրյա գործընթացներում, ինչը կրթության ոլորտում առանցքային է: Այցի ընթացքում ուսանողները և շրջանավարտները նշեցին, որ կցանկանային ավելի շատ գործնական դասընթացներ և ավելի լավ սարքավորումներ ունենալ:

Ուսանողները բավական ոգևորությամբ էին խոսում իրենց ուսանողական տարիներից և կարելի է փաստել, որ այցի ընցաքում նրանցից ստացանք մեծ քանակությամբ հստակ պատասխաններ:

Հաստատությունում գործում է ֆինանսական խնդիրներ ունեցող ուսանողների աջակցության քաղաքականություն:

- **Շահակիցների ներգրավվածություն**

ՖԿՀՊԻ-ում շահակիցների հետ համագործակցությունը հիմնված է երկար տարիների ընթացքում ձևավորված փորձի, այլ ոչ թե ակնհայտ ռազմավարության վրա: Բուհը շատ համաձայնագրեր ունի Սպորտի նախարարության, սպորտի ֆեդերացիաների, սպորտային ակումբների, միջնակարգ դպրոցների և այլ հաստատությունների հետ: Շահակիցների խնդրանքով իրականացվում է նաև խորհրդատվություն: Այցի ընթացքում շահակիցները դրական արտահայտվեցին ՖԿՀՊԻ հետ համագործակցության մասին:

- **Ենթակառուցվածք և ռեսուրսներ**

Նախորդ տասնամյակների ընթացքում ենթակառուցվածքների բարեկարգումն առաջնահերթություն էր բուհի համար: Խորհրդային միության փլուզումից հետո շինությունները շատ անբարեկարգ վիճակում էին, և վերջին 20 տարիների ընթացքում հսկայական ներդրումներ են իրականացվել և դեռ շարունակում են:

Գալիք տարում նոր լողավազան և թենիսի դաշտ կկառուցվի: Պլանավորվում է կենսաքիմիայի, անատոմիայի, սպորտային բժշկության և ֆիզիոլոգիայի լաբորատորիաների սարքավորումների բարելավում:

SS սարքավորումները նվազագույն չափով են հասանելի՝ ներառյալ համակարգիչներ, ցանց և WiFi ծածկույթ:

Սպորտային դահլիճների գույքը հնամաշ է, առկա չեն մարզիկներին մարզելու և հսկելու համար անհրաժեշտ էլեկտրական սարքարավորումներ:

Բուհն ունի ամբուլատորիա, որը զբաղվում է հիվանդությունների կանխարգելման և ուսանողների ֆիզիկական ընդհանուր վիճակի հարցերով: Այս առումով ուսանողներին բավարար մակարդակով ծառայություն է մատուցվում:

Խորհրդատվություններ.

1) Հաստատության առջև ներկայում ծառացած է ուսանողների թվաքանակի նվազման խնդիրը, որը կարող է խարխլել ֆինանսական կայունությունը: Հաստատությունը պետք է պրոֆիլային առաքելություն և տեսլական մշակի՝ իր շահակիցների հետ համագործակցության միջոցով: Սա հնարավոր է իրականացնել ուսանողների թվաքանակի նվազման պատճառների վերհանման շնորհիվ: Քանզի հաստատության գրավչությունն դիմորդների համար ևս խնդրահարույց է, միայն արդյունքահեն ռազմավարությունը կարող է վերոգրյալ նվազմանը հակահարված հասցնել: Ժամանակակից կրթական հասկացույթների/մոտեցումների և հետազոտության որակի վրա հիմնված հաստատության ռազմավարական հաղորդակցությունը, թափանցիկությունը և հասարակական ընդգրկվածությունը բեկումնային են:Ներկայումս

չկա ոչ մի ապացույց պնդելու, որ առկա ռազմավարական ծրագիրը կարող է լուծել հաստատության առջև ծառացած մեծագույն մարտահրավերը:

2) Հաստատությանն անհրաժեշտ է ուսուցման և դասավանդման հստակ տեսլական, և դրա ազդեցությունն ուս. պլանների մշակման վրա: ՄԿԾ-ների մշակման և դասավանդման գործընթացներում բուհին անհրաժեշտ է հիմնականում աշխատաշուկան ներկայացնող շահակիցների կառուցողական ներգրավվածություն: ՄԿԾ-ներում անհրաժեշտ է անհապաղ ուշադրությունը սևեռել շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունների վրա: Ուսումնական պլաններում անհրաժեշտ է իրականացնել հարացուցային փոփոխություն. ներկայումս գործող տարեկան հաշվարկներից անհրաժեշտ է անցում կատարել կրեդիտային համակարգի ժամանակակից հասկացույթին, որը հնարավորություն կընձեռի գծագրել ուսանողի անհատական և ճկուն հետագիծն, ինչպես նաև արդյունավետ կդարձնի նախկին կրթական որակավորման ճանաչումը: Անհնար է ճկունությունից խոսել, երբ առկա չէ հեռավար ուսուցում: Էլեկտրոնային ուսուցման համար անհրաժեշտ են ոչ միայն սարքավորումներ, այլ նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում:

3) Բոլոնիայի գործիքակազմի ներդրումը դեռևս ընթացքի մեջ է: Անհրաժեշտ է վերոգրյալ գործիքների օգտագործման ընդլայնում և խորացում տարբեր ոլորտներում՝ հատկապես Որակավորումների եվրոպական շրջանակի մակարդակին համապարասխան ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների և ՄԿԾ-ների կտրվածքով:

4) **Հաստատությունը պետք է մշակի որակի կառավարման և գործիքակազմի ամբողջական գունապնակ, ինչը թերի է այսօր: ՄԿԾ-երի համապատասխանեցման համար հույժ կարևոր է արտաքին շահակիցների համակարգված ներգրավվածությունը: ՈԱ ներդրումը հաստատությանը պետք է հնարավորություն ընձեռի ռազմավարության մշակման, այլ ոչ թե սոսկ գործընթացների վերահսկման համապատասխան գործիքակազմ ունենալ: ՊԻՍԲ շրջափուլի սկզբունքով իրականացվող որակի մշակույթը դեռևս ներմուծված չէ հաստատության բոլոր մակարդակներում:**

5) Հաստատությունը պետք է մշակի հետազոտության, գիտելիքների կառավարման և փոխանցման իր տեսլականը և այն վերածի հետազոտության հստակ քաղաքականության: Անհրաժեշտ է մշակել գրադարան-հետազոտություն/կրթության հստակ գործառական հարաբերություն: «Սովորել ամենուր, ամենժամ» մոտեցումն, ինչպես նաև տեղեկատվության փոխանցումն ու հասանելիությունը պետք է գրադարանի առաքելության անքակտելի մասը կազմեն: Հետազոտության օրակարգը կարող է մշակվել համապատասխան ոլորտների հետ համագործակցության արդյունքում: Գիտահետազոտական արդունքը պետք է համապատասխան լինի ՀՀ-ի և տարածաշրջանի կարքիներին: Գիտելիքի զարգացման համար ՖԿՀՊԻ-ն պետք է մշակի (միջազգային) ռազմավարական դաշինքներ: Էլեկտրոնային գիտական տվյալների բազաների ձեռքբերման համար անհրաժեշտ է անհապաղ համագործակցություն այլ ինստիտուտների հետ:

6) ՖԿՀՊԻ-ը պետք է մշակի շուկայի կարիքների վրա հիմնված վճարովի ծառայություններ: Սպորտային խորհրդատվություն, սպորտային դահլիճների վարձակայություն, ինչպես նաև կամպուսի բարելավում՝ միջազգային կոնֆերանս-կենտրոն դարձնելու նկատառումներով (սրանք հնարավոր տարբերակներից մի քանիսն են միայն):

7) Հաստատությունը պետք է ներդրումներ իրականացնի սպորտային սարքավորումների, գույքի, լաբորատորիաների արդիականացման ուղղությամբ: Անհրաժեշտ է

համագործակցություն (սպորտային) բիզնես ոլորտի և արտերկրի այլ բուհերի հետ: Անհրաժեշտ է SS բազային սարքավորումների և ուսուցման հարթակի ընդլայնում անձնակազմի և ուսանողների համար: Ներդրման ծրագիրը պետք է համահունչ լինի կրթության և գիտության ոլորտում ռազմավարական նպատակներին:

8) Եթե ՖԿՀՊԻ-ն նպատակ ունի Եվրոպական բարձրագույն կրթական տարածք ընդգրկվել, միջազգայնացումն անժխտելի նախապայման է: Միջազգային համանման հաստատությունների հետ համագործակցության համաձայնագրերն ավելի քան հրատապ են: Անհրաժեշտ է նաև խթանել անձակազմի և ուսանողների շարժունությունը, ՄԿԾ-երի և շնորհվող որակավորումների համապատասխանեցումը:

9) Մասնագիտական, էլեկտրոնային, ինտեգրված վարչական համակարգի մշակումը հույժ կարևոր է կրթության և հետազոտության աջակցության և ուսանողներին տրամադրվող ծառայության համար: Կառավարման համակարգում ՌԾ կատարողականի ցուցիչների վրա հիմնված ցուցիչների առկայությունը կարող է օգտակար լինել բուհի գործընթացների մշտադիտարկման և որոշումների կայացման գործընթացներում:

Մկրտիչ Ավագյան
Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

08.06.2016թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՖԿՀՊԻ ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

- **Ավագյան Մկրտիչ՝** փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան, Կրթական բարեփոխումների և որակի վարչության պետ, խմբի ղեկավար,
- **Յոհան Քլութ՝** Բարձրագույն ուսումնական հաստատությունների եվրոպական ասոցիացիայի գլխավոր քարտուղար, Բելգիա, անդամ,
- **Գայանե Մարմարյան՝** կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, անդամ,
- **Սոնա Սարգսյան՝** բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական բժշկական համալսարան, անդամ,
- **Դավիթ Պետրոսյան՝** Հայաստանում Ֆրանսիական համալսարան, Կառավարման ֆակուլտետ, 3-րդ կուրս, ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել են ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետ Լիլիթ Պիպոյանը:

Թարգմանությունը կատարել է Հայաստանի Ֆրանսիական համալսարանի Օտար լեզուների ամբիոնի վարիչ Զարուհի Սողոմոնյանը:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ինստիտուտի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՖԿՀՊԻ-ն 25.08.2015թ.-ին դիմել է ՈԱԱԿ՝ ներկայացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտ, լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշումը կայացվել է 18.09.2015թ.-ին, որից հետո ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Հաստատությունն, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, 05.11.2015թ.-ին ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Ինստիտուտի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ՄՈՒՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ինքնավերլուծության

զեկույցի անգլերեն և հայերեն տարբերակները և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել են 26.11.2015թ.-ին՝ հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո:

Ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ինստիտուտի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով պատասխանատուների (Լ. Զաքարյան, Ա. Մակարյան) կողմից իրականացվել է 4 վերապատրաստում հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները
3. փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը
4. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբն, ուսումնասիրելով ինստիտուտի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթն, իրականացրել է նախնական գնահատում 01.02.2016-18.03.2016 ընկած ժամանակահատվածում: Ըստ ձևաչափի՝ պատրաստելվել է լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև պարզաբանման ենթակա խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները և թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և գործընթացի համակարգողը փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է փորձագիտական այցի ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախապատրաստական այց

2016 թվականի ապրիլի 16-ին գործընթացի համակարգողը, փորձագիտական խմբի ղեկավարը և Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավարն այցելել են ՖԿՀՊԻ՝ վերջնականացնելու այցի ժամանակացույցը:

Դիտարկվել են փորձագիտական խմբին տրամադրվող սենյակը, հանդիպումների դահլիճը, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները: Ինսիտուտին ներկայացվել են ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ստորաբաժանումներն, ուր ցանկանում են այցելել փորձագետները: Քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, ինչպես նաև հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը փորձագիտական խմբի բոլոր անդամները (ներառյալ միջազգային փորձագետը) և համակարգողը հանդիպել են ՈԱԱԿ-ում:

---

[2]ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՖԿՀՊԻ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի ժամանակացույց

Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբը համաձայնեցրել է փորձագիտական գնահատման շրջանակը, չափանիշների գնահատման սանդղակը, որն ըստ ՈԱԱԿ-ի ընթացակարգերի՝ ներառում է երկու մակարդակ՝ 1) բավարարում/համապատասխանում է չափանիշի պահանջներին, 2) չի բավարարում/համապատասխանում չափանիշի պահանջներին: Վերջնականացվել են այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հանդիպումների վարման էթիկան, հստակեցվել են հետագա քայլերը:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2016թ.-ի մարտի 21-ից 24-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը մեկնարկել և ավարտվել է ինստիտուտի ռեկտորի հետ հանդիպումով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել ինստիտուտի տարբեր ստորաբաժանումներում: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների հետ բաց քննարկումները:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռքբերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման առանձին չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական այցից հետո փորձագիտական խումբը՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում պատրաստել է հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը, որը կազմելիս հիմնվել է ՖԿՀՊԻ ինքնավերլուծության նախնական գնահատման և փորձագիտական այցի դիտարկումների վրա: Փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամ իր ներդրումն է ունեցել զեկույցի պատրաստման աշխատանքներում, ինչպես նաև արձագանքել է ամբողջական տարբերակին: Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիքը: Հիշյալ փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Միջազգային փորձագետի մոտեցումներն ամփոփվել են զեկույցում, իսկ գործընկերային գնահատումն ամբողջությամբ է ներառվել զեկույցի տեքստում:

Նախնական զեկույցը ներկայացվել է ինստիտուտ 2016թ.-ի մայիսի 5-ին:

Զեկույցի վերաբերյալ իր արձագանքը ՖԿՀՊԻ-ն ուղարկել է ՈԱԱԿ 16.05.2016թ.: Ուսումնասիրելով փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը բուհը չի ներկայացրել դիտողություններ ու մեկնաբանություններ՝ բացառությամբ որոշ թվային ճշգրտումների, ինչի

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

համաձայն փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 07.06.2016թ.:

Լիլիթ Պիպոյան

Համակարգողի ստորագրություն **08.06.2016թ.**

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: Ինստիտուտի պատմությունը սկսվում է 1930 թվականից, երբ Երևանում կազմավորվեց Ֆիզիկական կուլտուրայի տեխնիկումը՝ եռամյա ուսուցման ժամկետով: Այն առաջին մասնագիտական ուսումնական հաստատությունն էր հանրապետությունում, որը պատրաստում էր հանրակրթական դպրոցներում ֆիզիկական դաստիարակություն դասավանդող կադրեր: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1945թ. հուլիսի 21-ի N 557 որոշման համաձայն՝ Հանրապետական սպորտկոմիտեի համակարգում ստեղծվեց Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը՝ քառամյա ուսուցման ժամկետով: Առաջին անգամ Հայաստանում ստեղծվեց հատուկ բարձրագույն ուսումնական հաստատություն, պատրաստելու բարձր որակավորում ունեցող ազգային կադրեր՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի համար:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ: ՖԿՀՊԻ-ում ներկայում գործում են 2 ֆակուլտետ և 18 ամբիոն: Ինստիտուտն իրականացնում է առկա ուսուցման համակարգում բակալավրի 4 մասնագիտության կրթական ծրագրիր (ՄԿԾ), հեռակա ուսուցման համակարգում՝ 4 ՄԿԾ, մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգում՝ 4 ՄԿԾ: Այսօր բուհում ուսանում են 2779 ուսանող:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ: ՖԿՀՊԻ-ն հանդիսանալով գիտակրթական հաստատություն, իր առաքելության հիմնական խնդիրն է համարում դառնալ Հայաստանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գործնական և գիտական հետազոտությունների իրականացման, ուսումնառության գործընթացների, գիտական մշակումների ներդրման, ուսուցման գործընթացի զարգացման և կատարելագործման առաջատար կազմակերպիչը, կենտրոնը:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ: ՖԿՀՊԻ-ի արտաքին կապերի և միջազգայնացման միջոցով, իր առաքելությունն է համարում ինտեգրվել միջազգային կրթական տարածքին, իրականացնել միջազգային կրթագիտական և փոխանակման ծրագրեր, ապահովել ուսանող-մարզիկներին, աշխատակիցներին միջազգային կրթական գործընթացներում ընդգրկմանը, բարձրացնել ինստիտուտի միջազգային հեղինակությունն ուսումնամարզական, գիտամեթոդական և ֆիզկուլտուրային առողջարարական ոլորտներում:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ: ՖԿՀՊԻ-ի նպատակն է իր առաքելությանն ու որակի ներքին և արտաքին ապահովման քաղաքականությանը համապատասխան որակի ապահովման կայուն ներքին համակարգի ներդրումն ու զարգացումը՝ մասնավորապես որակի ապահովման և կառավարման համակարգի մեխանիզմների, գործիքների ստեղծումն ու կատարելագործումը:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունը դիտարկել է որպես ՄՈՒՀ-ի հիմնական հավակնություններ և նպատակներ:

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

1.1 Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտն իր 2011-2015թթ. ռազմավարական ծրագրում ձևակերպել է իր առաքելությունը, որը միտված է գիտելիքի ստեղծմանը, փոխանցմանը և տարածմանը, ուսանողների և դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացմանը, հանրության տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի բարեկեցության բարձրացմանը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

Ինստիտուտի գործունեության գերակա նպատակներն են՝

- ստեղծել և իրականացնել կրթական և հետազոտական ծրագրեր երիտասարդության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման, հասարակության առողջ ապրելակերպի կարիքներին համահունչ:
- Ուսանողներին նախապատրաստել աշխատանքային գործունեության, մասնագիտական առաջընթացի, ժամանակակից հասարակության պայմաններում:
- Ստեղծել նպաստավոր միջավայր անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, օրինապահ ու պատասխանատու քաղաքացու ձևավորման համար:

2016-2020թթ. ռազմավարական ծրագրում ՖԿՀՊԻ-ին հստակեցրել է առաքելության սահմանումը՝ նպատակաուղղելով այն բարձրագույն մասնագիտական կադրերի պատրաստմանը, երկրում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը, մարզական գիտելիքների ստեղծմանն ու տարածմանը, ժամանակակից աշխատաշուկայի պահանջները բավարարող առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական որակյալ ծառայությունների մատուցմանը:

Բուհն իր գործունեությունը ծավալում է ՈԱՇ-ի սահմանված երկու՝ բակալավրի և մագիստրոսի մակարդակներով, որոնց շրջանավարտներին տրվող որակավորումները համապատասխանում են ՈԱՇ-ով նկարագրված 6-րդ և 7-րդ մակարդակներին:

ՖԿՀՊԻ-ին առաքելությունն իրականացնելու նպատակով մշակել է զարգացման ռազմավարական ծրագիր, որի հիմնական ուղղությունները բաժանվել է գործունեության 8 տիրույթների՝ կրթական, գիտական, խորհրդատվական և տեղեկատվական գործունեություն, ինստիտուտի կառավարման բարելավում, որակի ապահովման, նյութատեխնիկական բազայի արդիականացում, ֆինանսատնտեսական, սոցիալական ոլորտի բարելավում, միջազգայնացում:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ շահակիցները տեղյակ են և կիսում են բուհի ռազմավարական նպատակները և աջակցում վերջիններիս իրականացմանը:

1.2 ՖԿՀՊԻ-ն իր առաքելությունը, նպատակները և խնդիրներն իրականացնելու համար ունի ներքին և մասամբ արտաքին շահակիցների ներգրավման շրջանակ: Բուհում գործում են շահակիցների կարիքները բացահայտող մի շարք կառուցակարգեր.

- արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածություն ՖԿՀՊԻ-ի և նրա ստորաբաժանումների կոլեգիալ կառավարման մարմիններում,
- շահակիցների տարբեր խմբերի ներկայացուցիչների մասնակցություն համաինստիտուտական և ֆակուլտետային զանազան հանձնաժողովներում և հանձնախմբերում,
- ինստիտուտում գործող ուսանողական կազմակերպությունների գործունեությունը:

Ներքին շահակիցներն իրենց մասնակցությունն են ունեցել ՌԾ-ի մշակմանը, որի մասին է վկայում ռազմավարական ծրագրի նախագծման աշխատանքային խումբը, որը ներկայացուցչական էր, ներգրավված էին ներկայացուցիչներ բոլոր ստորաբաժանումներից՝

ինստիտուտային և ֆակուլտետային մակարդակի վարչական աշխատողներ, դասախոսներ և ուսանողներ: ՌԾ-ի նախագիծը տեղադրվել է կայքէջում ներքին և արտաքին շահակիցներին հասանելի դարձնելու և քննարկման նպատակով: ՌԾ-ն քննարկվել և ընդունվել է ՖԿՀՊԻ գիտխորհրդի և կառավարման խորհրդի կողմից, որոնցում ընդգրկված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներ:

Այցի ընթացքում բացի վերոգրյալից պարզ դարձավ նաև, որ ներքին շահակիցների կարիքները վեր հանելու նպատակով որակի ապահովման (ՈԱ) բաժինը մշակել է տարաբնույթ հարցումների ձևաթերթեր, սակայն այս կառուցակարգը դեռևս լայն կիրառություն չի ստացել բուհում, առկա չէ տվյալների ամբողջական վերլուծություն, հետևաբար նաև չկան դրանց արդյունավետությունը գնահատող բավարար հիմքեր: Արտաքին շահակիցների կարիքների բացահայտման հստակ կառուցակարգեր և ընթացակարգեր բուհում դեռևս առկա չեն:

1.3 Ռազմավարական նպատակների կատարման համար սահմանվել է իրականացման ժամանակացույց-պլան:

Փաստաթղթում ներկայացված են ռազմավարական խնդիրների իրագործման համար պլանավորված միջոցառումներն, իրականացման ժամկետները, պատասխանատուները: Սակայն հստակ չեն արդյունավետության գնահատման ցուցիչների ձևակերպումները, ներառված չեն որակական և քանակական չափանիշներ:

Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման միակ մեխանիզմն է ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գործունեության մասին ռեկտորի տարեկան հաշվետվությունը: Նմանատիպ հաշվետվություններ են մշակում և ներկայացնում վարչական ստորաբաժանումները և ամբիոնները: Սակայն գնահատման և բարելավման համընդհանուր մոտեցում, ինչպես նաև դրանց գործառության հստակ ու արդյունավետ մեխանիզմներ դեռևս չկան, ինչը խոչընդոտում է ձեռքբերված արդյունքների թիրախավորված գնահատմանը և դրանց հիման վրա բարելավումների իրականացմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՖԿՀՊԻ-ն ունի նոր վերամշակված առաքելություն, որն ավելի հստակ է մատնանշում բուհի ուղղվածությունն, այնուամենայնիվ առաքելության երկարաշունչ լինելը կարող է այն դժվար ընկալելի դարձնել բուհի շահակիցների համար:

ՄՈՒՀ-ն ունի առաքելությունից բխող, կրթական ծառայությունների մատուցմանը միտված ձևակերպված նպատակներ, դրանից ածանցվող խնդիրներ, ակնկալվող վերջնարդյունքների ցուցիչներ: Հարկ է նշել, որ 2016-2020թթ. ՌԾ-ով նպատակներն առավել հստակեցվել են և փոխկապակցվել իրականացվող գործողություններին:

ՄՈՒՀ-ը մշակել է 2011-2015թթ. ԶՌԾ իրականացման ժամանակացույց-պլան, ուր ամրագրված են սահմանված նպատակներն իրականացնելու գործառույթները, պատասխանատու ստորաբաժանումները, սակայն բացակայում է գործառույթների իրականացման հստակ ժամանակացույցը՝ տարանջատումը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի, ինչը կարող է հանգեցնել կազմակերպման արդյունավետության նվազեցմանը:

ՖԿՀՊԻ-ն կարևորում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտումը և աշխատանքներ է կատարում այդ ուղղությամբ: Ներքին շահակիցները ներկայացված են կառավարման տարբեր օղակներում և մասնակցում են ռազմավարական պլանի մշակմանը, քննարկմանն ու հաստատմանը: ՄՈՒՀ-ը մշակում և ներդնում է շահակիցների կարիքների վերհանման նոր մեխանիզմներ, սակայն դրանցից շատերը դեռևս կայացման փուլում են և լրամշակման կարիք ունեն (հարցաթերթերի մի մասը կիրառության մեջ չի մտել կամ նոր է անցել փորձաշրջանը): Արտաքին շահակիցների ներգրավվածությունն ապահովող մեխանիզմները հստակ չեն և ընթացակարգային բնույթ չեն կրում, ինչը խոչընդոտում է շահակիցների հետ հետադարձ կապն իրականացնող գործընթացները:

Բուհում գործող՝ ԶՌԾ-ում ամրագրված նպատակների ձեռքբերման արդյունավետության գնահատման միակ գործիքը հաշվետվությունների համակարգն է: Առաքելության և ՌԾ-ի իրականացման արդյունավետության գնահատման համալիր մեխանիզմների և ընթացակարգերի բացակայությունը խոչընդոտում է նրանց բարելավման գործընթացների առավել համակարգված իրականացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ինստիտուտն ունի նոր, հստակ ձևակերպված առաքելություն, բուհի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող նպատակներ և խնդիրներ արտահայտող ռազմավարական գործողությունների ծրագիր, ներքին շահակիցների բավարար տեղեկացվածություն և մասնակցություն դրանց իրականացմանը, կարելի է եզրակացնել, որ ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որն էլ համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Եզրակացություն: ՖԿՀՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Իր նպատակների իրականացմանն ուղղված որոշումների կայացման և իրագործման գործընթացը ՖԿՀՊԻ-ն ապահովում է իր կառավարման կազմակերպական կառուցվածքի միջոցով, որի բաղադրիչների գործառույթներն ու փոխհարաբերությունները կանոնակարգված են համապատասխան փաստաթղթերով:

ՖԿՀՊԻ-ն կառավարումն իրականացվում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ՖԿՀՊԻ կանոնադրությանը համապատասխան ինքնակառավարման հիման վրա՝ խորհրդի, գիտխորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ: Ինստիտուտի կառավարումն իրականացվում է ինքնավարության, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

ՖԿՀՊԻ-ի որոշումները կատարվում են համաձայն ռեկտորի հրամանների: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ որոշումները ինստիտուտում կայացվում են էթիկայի կանոնների պահպանմամբ, սակայն դրանք սահմանվել են միայն վերջին տարում: Այնուամենայնիվ, ՖԿՀՊԻ-ում բացակայում են մեխանիզմները, որոնք կերաշխավորեին որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունն, ինչպես նաև կվերահսկեին հրամանների և հրահանգների կատարումը:

ՖԿՀՊԻ-ն, ՌԾ-ի նպատակներին համապատասխան, 2014-2015թթ. ուսումնական տարվանից կառավարման համակարգում կատարել է կառուցվածքային փոփոխություններ 2010-2011թթ. համեմատ: Այնուամենայնիվ, ենթակառուցվածքների գործառույթները հստակ տարանջատված չեն, որոշ ստորաբաժանումներում գործառույթները կրկնվում են: Վարչական ապարատում առկա է միևնույն անձի՝ մի քանի պաշտոնների միաժամանակ վարման պրակտիկա:

ՖԿՀՊԻ-ի կառուցվածքային տարբեր մակարդակներում աշխատակիցների աշխատանքի ընդունումը, հեռացումը, գնահատումը, խրախուսումը իրականացվում է ՖԿՀՊԻ-ի կանոնադրություններով և ընթացակարգերով: ՖԿՀՊԻ-ն ունի կրթական նպատակները իրականացնելու համար համապատասխան մարդկային ռեսուրսներ, իր ուսումնական գործընթացների, գիտահետազոտական, ֆինանսական և տնտեսական գործունեության

վարչարարությունն ու կառավարումն իրականացվում է բաժինների և այլ ստորաբաժանումների միջոցով: ՄՈՒՀ-ը քայլեր է կատարում իր կառավարման համակարգը դարձնել ՌԾ-ի նպատակներին և խնդիրներին համահունչ:

2.2 Գործող կանոնակարգերի հիման վրա ՖԿՀՊԻ-ն փորձում է ներքին շահակիցներին մասնակից դարձնել որոշումների կայացման գործընթացներին, ինչպես նաև հաշվի առնել նրանց կարծիքները դրանց կայացման ժամանակ: ՖԿՀՊԻ–ի դասախոսները և ուսանողներն ընդգրկված են կառավարման տարբեր մարմինների կազմում և անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով մասնակցում են ուսումնական հաստատության կառավարման գործընթացին, հարցերի քննարկմանն ու դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը:

ՖԿՀՊԻ-ում գործում է նաև ընդհանուր կամ ինստիտուտի կոլեկտիվի ներկայացուցիչների ժողովը՝ միտված ՄՈՒՀ-ի կարևորագույն հարցերի լուծմանը: Կառավարման մարմիններում չընդգրկված դասախոսներն ու ուսանողներն իրազեկվում են ընդունված որոշումների մասին ամբիոններում, ուսանողական խորհրդում, որտեղ պաբերաբար կազմակերպվում են քննարկումներ: ՄՈՒՀ-ն իր գործընթացներին առնչվող պաշտոնական փաստաթղթերը հրապարակում է նաև իր պաշտոնական կայքում, թղթային տարբերակով տարածում բոլոր ստորաբաժանումներում: Սակայն հարկ է նշել, որ ՖԿՀՊԻ-ի գործընթացներին առնչվող պաշտոնական ոչ բոլոր փաստաթղթերն են առկա կայքում: Ուսանողները կարծում են, որ բավարար չափով կարողանում են մասնակցություն ունենալ կառավարմանը, իսկ դասախոսները համարում, որ իրենց ձայնը լսելի է՝ ամբիոնների նիստերում և կոլեկտիվի ժողովներում բարձրացված հարցերի միջոցով: Այնուամենայնիվ, որոշումների կայացման գործընթացում դասախոսների և ուսանողների ներգրավման արդյունավետությունը ՄՈՒՀ-ի կողմից գնահատված չէ:

2.3 ՖԿՀՊԻ-ն առաջնորդվում է իր առաքելությանը և նպատակներին համապատասխան մշակված հնգամյա (2011-2015թթ.) ՌԾ-ով որպես երկարաժամկետ պլան: Սակայն բացակայում են դրանց իրականացման տրոհումը միջնաժամկետ (բացառությամբ ինստիտուտի գիտահետազոտական ոլորտի) և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի: ՖԿՀՊԻ-ն ունի տարեկան գործունեության պլանավորում, որն առավել համապատասխանում է բուհի ընթացիկ գործընթացների պլանավորմանը: Պլանավորումը ՄՈՒՀ-ում ընդունված է կատարել առանձին ստորաբաժանումներով:

ՄՈՒՀ-ը դիտարկում է ստորաբաժանումների, ռեկտորի տարեկան հաշվետվությունները, որպես մշտադիտարկման մեխանիզմ, և դրանց արդյունքների հիման վրա իրականացնում հաջորդ տարվա գործողության պլանի մշակումը: Սրանով հանդերձ բուհի ծավալած գործունեության արդյունքների գնահատման հստակ մեխանիզմներ մշակված չեն, տարեկան նպատակների իրականացման և մշտադիտարկման մեխանիզմներն ու գործիքակազմն էլ հստակ սահմանված չէ: ՖԿՀՊԻ-ում առկա չէ երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների՝ որպես փոխկապակցված համակարգի, մշակման, իրականացման և գնահատման մեխանիզմը:

2.4 ՄՈՒՀ-ը կրթական բարեփոխումների գործընթացում է, և իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունն ու որոշումների կայացման գործընթացը դիտարկում է Բոլոնիայի գործընթացին ինտեգրվելու անհրաժեշտությունից:

ՖԿՀՊԻ-ում ստորաբաժանումների աշխատանքային հաշվետվությունները տվյալների հավաքագրման հիմնական մեխանիզմն է: ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման համար կիրառվող մեխանիզմ է նաև հարցումը, սակայն այն համակարգված և պարբերական բնույթ չի կրում, իրականացվում է փորձնական և հուսալիության տեսանկյունից բարելավման կարիք ունի: ՖԿՀՊԻ-ն ունի շահակիցների հետ շփումներ, սակայն այն համակարգված չէ, ուստի և, չի նպաստում գործունեության վրա ազդող

գործոնների լիարժեք ուսումնասիրությանը: Փաստացի ՄՈՒՀ-ում բացակայում է արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրման գործընթացը:

2.5 ՖԿՀՊԻ-ում քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը նախատեսում է իրանացնել պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում (ՊԻԳԲ) սկզբունքով՝ կարևորելով որակի կառավարման գործընթացը, ինչի մասին խոսում է 2012թ.-ին «Կրթական համակարգի որակի ապահովման բաժնի» ստեղծումը, որակի ապահովման ձեռնարկի մշակումը և որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգի մշակումը: ՄՈՒՀ-ում վարչարարության գործող քաղաքականությունը հաշվետվողականությունն է ներքնից վերև:

ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր ստորաբաժանում պլանավորում է իր գործունեությունը և հաստատում գիտական խորհուրդներում: Պլանավորվածի իրականացման մակարդակը և ստացված արդյունքները գնահատվում են հաշվետվությունների մեխանիզմով. ամբիոններից ֆակուլտետներ կամ բաժիններից համապատասխան պրոռեկտորներին, սակայն, արդյունքների գնահատման գործիքներ և մեխանիզմներ չեն մշակվել: ՊԻԳԲ սկզբունքով իրականացվող վարչարարությունը պլանավորման և մասամբ իրականացման փուլում է: Չկան հետադարձ կապի մեխանիզմներ:

2.6 ՖԿՀՊԻ-ն նպատակ ունենալով կիրառել որակի ապահովման գործընթացներ՝ փորձում է մշակել և ներդնել գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման գնահատման մեխանիզմներ: 2014թ.-ին մշակվել և հաստատվել է «Կրթական ծրագրի մշտադիտարկման և վերանայման կանոնակարգը»: ՄՈՒՀ-ն իրականացնում է ՄԿԾ-ի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների արդյունավերությանը միտված տեղեկատվության հավաքագրում և տեղեկատվության հիման վրա իրականացնում որոշակի գործառույթներ (օրինակ՝ ծրագրերի նպատակային օպտիմալացում): Այնուամենայիվ, բուհը չունի տվյալ գործընթացի արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:

Անցկացվել են նաև հարցաթերթային հարցումներ՝ պարզելու համար ուսանողների և դասախոսների գնահատականը դասընթացների որակի, ինչպես նաև ծառայությունների վերաբերյալ, սակայն արդյունքների ամբողջական վերլուծություն չի իրականացվել, հետևաբար նաև չի վերլուծվել գործիքների արդյունավետությունը:

2.7 ՖԿՀՊԻ-ն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը հրապարակում է բուհի պաշտոնաթերթում և կայքէջում: Փաստացի ՄՈՒՀ-ում առկա են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ տվյալներ, այդուհանդերձ, բացակայում են որակի մասին քանակական և որակական հրապարակումները և դրանց գնահատող մեխանիզմները, ինչի մասին փաստում է նաև բուհն իր ինքնավերլուծության զեկույցում:

Դատողություններ: ՖԿՀՊԻ-ն ունի կառավարման համակարգի որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և համապատասխան ընթացակարգեր, կառավարման համակարգում իրականացրել է կառուցվածքային փոփոխություններ՝ բարելավման և ՌԾ-ի նպատակներին և խնդիրներին համապատասխանեցնելու միտումով: Այնուամենայնիվ դրանք իրագործվել են 2014-2015թթ.-ին, ուստի արդյունավետության վերլուծությունը դեռևս բացակայում է, հետևաբար այս առումով ՄՈՒՀ-ը ՊԻԳԲ շրջափուլի իրականացման փուլում է:

ՄՈՒՀ-ը մշակել է կառավարման կառույցի գծապատկեր, որը, սակայն, համակարգված չէ, ինչը կարող է հանգեցնել շահակիցների կողմից ինստիտուտի կառավարման կառուցվածքի թյուր ընկալմանը:

ՖԿՀՊԻ-ի պաշտոնական կայքում տրամադրվող տեղեկատվությունը գիտական խորհրդի որոշումների, ներինստիտուտային նորմատիվ ակտերի վերաբերյալ ունի

թարմացման և արագ համալրման կարիք, ինչի պակասը նվազեցնում է արտաքին շահակիցների տեղեկացվածությունը բուհի կառավարչական գործընթացների վերաբերյալ:

ՖԿՊՀԻ-ն կրթական ծառայությունների մատուցման նպատակով մշակել է ռազմավարական և ընթացիկ գործառույթների պլանավորում, լրամշակել ռազմավարական պլանավորումը (2016-2020թթ.) և տեղադրել ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքում, սակայն ժամանակացույցի ոչ հստակ տարանջատումն ըստ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի վտանգի տակ է դնում կազմակերպման և կառավարման արդյունավետությունը և ՊԻԳԲ շրջափուլի ստուգման և բարելավման գործընթացները:

ՄՈՒՀ-ի կառավարման բոլոր մակարդակներում և ստորաբաժանումներում գործում է հաշվետվողականության մեխանիզմը, սակայն դրա գնահատման գործիքների, գործառույթների արդյունավետության քննադատական վերլուծությունների բացակայությունը կարող է խաթարել կրթական բարեփոխումների, թերությունների և բացթողումների վերհանման ընթացքը, հետևաբար նաև համապատասխան եզրահանգումների և բարելավման գործընթացը:

ՖԿՀՊԻ-ն վարչարարության գործառույթների իրականացման նպատակով մշակել է համապատասխան կանոնակարգեր, հայեցակարգեր և ընթացակարգեր, գործում է ներքնից վերև հաշվետվողականության մեխանիզմը: ՄՈՒՀ-ը ՄԿԾ-ի և կրթական ծառայությունների բարելավման նպատակով իրականացնում է գործընթացների տեղեկատվության հավաքագրում, այն է՝ հաշվետվություններ և հարցումներ, ինչը լիովին ներդրված չէ: Գնահատման և հետադարձ կապի հստակ մեխանիզմների բացակայությունը կարող է ռիսկի տակ դնել մատուցվող ծառայությունների որակի բարելավումը:

ՖԿՀՊԻ-ն, իր գործունեության մասին, ընդհանրապես, և կրթական ծրագրերի վերաբերյալ, մասնավորապես, տեղեկատվության տարածման նպատակով կիրառում է երկու հիմնական գործիք՝ պաշտոնական կայք և պարբերական, սակայն առկա կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ տվյալների հրապարակումներում բացակայում են գնահատող մեխանիզմները, ինչը կարող է խոչընդոտել բուհի դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը և արտաքին շահակիցների հետ աշխատանքներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բացակայում են կառավարման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմները, կազմակերպական կառուցվածքը ճկուն չէ, որոշ ստորաբաժանումների գործառույթները կրկնվում են՝դրանով իսկ խոչընդոտելով վարչական կառույցների հորիզոնական կապերի գործառնականությունը, որոշումների կայացման արդյունավետությունը չի գնահատվում, առկա չէ երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ փոխկապակցված պլանավորման համակարգ, բուհի կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման կիրառվող մեխանիզմը՝ հարցումները, փորձնական են, ՊԻԳԲ շրջափուլն ամբողջովին չի գործում, կարելի է եզրակացնել, որ ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն դեռևս արդյունավետ չեն, լիարժեքորեն միտված չեն հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը:

Եզրակացություն: ՖԿՀՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՖԿՀՊԻ-ն ՌԾ-ում ամրագրել է նպատակ՝ Բոլոնիայի գործընթացի խնդիրներին համահունչ բարձրացնել ուսուցման որակը և արդյունավետությունը կրթական բոլոր ծրագրերի գծով, սահմանել կարևոր խնդիր՝ կրթական ծրագրերի մասնագիտական կառուցվածքի և

բովանդակության բարելավում և արդիականացում՝ եվրոպական ծրագրային չափանիշներին համահունչ, իսկ վերջինիս իրականացման նպատակով պլանավորել գործառույթ՝ շարունակել ուսումնական պլանների և ծրագրերի կատարելագործումը՝ հաշվի առնելով կադրերի միջազգային փոխանակության և կրթության փաստաթղթերի փոխադարձ ճանաչման անհրաժեշտությունը:

ՄՈՒՀ-ը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա համակարգերում կրթությունն իրականացնում է հետևյալ մասնագիտություններով՝ 1. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ, 2. Ֆիզիկական կուլտուրա առողջական շեղում ունեցող անձանց համար (ադապտացված ֆիզիկական կուլտուրա և կինեզիոլոգիա), 3. Լրագրություն և 4. Փրկարարներ: Կարելի է փաստել, որ ՄՈՒՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը մշակվել են ինստիտուտի առաքելությանը համապատասխան:

Ինչպես նշվում է ինքնավերլուծության զեկույցում՝ ՄԿԾ-ների բաղադրիչները՝ ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը կազմված են բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների հիման վրա և հաստատված են ՖԿՀՊԻ-ի գիտական խորհրդում:

ՄԿԾ-ները ձևակերպված են ելքային կրթական արդյունքներով, որոնք համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ին: Սակայն, ըստ փորձագիտական խմբի դիտարկումների, ՄԿԾ-ների սահմանված ուսումնառության վերջնարդյունքները լրամշակման կարիք ունեն: Մասնավորապես՝ հստակ չէ գիտելիք, հմտություն, կարողություն բաղադրիչների տարանջատումը, առանձին դեպքերում՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը նույն վերջնարդյունքներն ունեն:

ՖԿՀՊԻ-ն աշխատանքներ է տարել անցնելու դասընթացների մոդուլային ուսուցման, այս տեսանկյունից ներկայացված առարկայական նկարագրերն ունեն բացթողումներ, մասնավորապես՝ ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքների ձևակերպումները հաճախ նկարագրական բնույթի են:

ՄՈՒՀ-ի առարկայական ծրագրերը պարբերաբար ուսումնասիրվում են մեթոդական խորհրդի կողմից և հարկ եղած դեպքում՝ ուղարկվում լրամշակման: Կրթական ծրագրերը մշակելիս ՄՈՒՀ-ը հիմնականում վերլուծել է ՌԴ Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և տուրիզմի համալսարանի, Սանկտ Պետերբուրգի Պ.Ֆ. Լեսգաֆտի անվան ֆիզիկական կուլտուրայի պետական համալսարանի ՄԿԾ-ները:

3.2 Ներկայում ՖԿՀՊԻ-ում ուսուցումն իրականացվում է գերազանցապես ավանդական ձևերով: Դրական փաստ է, որ վերջին 3 տարիների ընթացքում ինստիտուտի մի շարք ամբիոններ դասավանդման մեթոդներում սկսել են կիրառվել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Սակայն, ինչպես նշված է ինքնավերլուծության զեկույցում, ՖԿՀՊԻ-ն ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն չունի: Դասավանդման մեթոդների ընտրությունն առայժմ համակարգված չէ և պայմանավորված է միայն դասավանդվող առարկայի առանձնահատկություններով: Մի կողմից այն իրականացվում է դասախոսի նախընտրությամբ, մյուս կողմից՝ որոշ ուսումնական առարկաների դասավանդման գործընթացը ժամանակակից պահանջներին համապատասխան իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ չկան:

Փաստացի ՖԿՀՊԻ-ն չունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ու ակնկալվող արդյունքների հստակ քարտեզագրում: Ուսանողակենտրոն ուսուցման կազմակերպման պրակտիկան բուհում դեռևս բարելավման կարիք ունի: Տեսականորեն ինստիտուտը որդեգրել է ուսանողակենտրոն մոտեցումը, և առանձին ամբիոններ փորձում են համապատասխանեցնել դասավանդման մեթոդներն ուսումնառության վերջնարդյունքներին: Դրանով հանդերձ, ելքային արդյունքները և դրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդներն արտացոլող հիմքերը թերի են և չեն հավաստում նշված գործընթացների արդյունավետությունը:

3.3 ՖԿՀՊԻ-ում ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը կատարվում է ըստ գիտելիքների գնահատման կանոնակարգի: ՄՈՒՀ-ում ներդրվել է գնահատման բազմագործոնային համակարգ, որը վերանայվել է ըստ անհրաժեշտության, վերանայումն ուղեկցվել է անցումային շեմերի, վերջնական գնահատականի ձևավորման բաղադրիչների կշիռների փոփոխմամբ: Ինստիտուտում կիրառվում է վարկանիշային գնահատման 100 միավորանոց համակարգ, որտեղ անցումային շեմը 60-ն է, ամփոփիչ ստուգման արդյունքները արտահայտվում են նաև տառային սանդղակով: Փորձագիտական խումբը նկատեց, որ ուսանողների և դասախոսների հիմնական մասը գոհ է գնահատման առկա համակարգից և գտնում է, որ գնահատման մեթոդները թույլ են տալիս չափել ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը:

Դրական է, որ ՖԿՀՊԻ-ն սահմանել է ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգ, ձևավորել բողոքարկման հանձնաժողով, ուսանողները որպես դիտորդներ կարող են մասնակցել գործընթացին, այդուհանդերձ, որքանով է այն ապահովում ակադեմիական ազնվությունը դեռևս առարկելի է, քանի որ այցի ընթացքում պարզվեց, որ գնահատմանը վերաբերող բողոքարկումների թվաքանակը չնչին է, այն էլ՝ բանավոր: Փորձագիտական խումբն արձանագրում է, որ ՄՈՒՀ-ում ակադեմիական ազնվության պահպանման պահանջները սահմանված չեն, հստակ չէ միջանկյալ, ամփոփիչ քննությունների, մագիստրոսական թեզերի իրականացման ժամանակ գրագողության դեմ պայքարի և կանխարգելիչ միջոցառումների համաբուհական ըմբռնումը:

3.4 ՖԿՀՊԻ-ին կարևորում է իր կրթական ծրագրերի բովանդակային համահունչությունը այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին:

Եվրոպական երկրների համալսարանների կրթական ծրագրերի հետ բովանդակային համահունչությունը և ուսանողների ու շրջանավարտների շարժունությունն ապահովելու տեսակետից «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում Բելգիայի Լյուվենի համալսարանի ներկայացուցիչների հետ համատեղ խորհրդակցության ժամանակ վերանայվել է «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ առողջական շեղում ունեցող անձանց համար, կինեզիոլոգիա» մասնագիտության կրթական ծրագիրը, «Սպորտային լրագրություն» մասնագիտության կրթական ծրագիրն ամբողջությամբ համեմատվել է Սանկտ Պետերբուրգի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի համանման ծրագրին:

Սրանով հանդերձ՝ ՖԿՀՊԻ-ն չունի բենչմարքինգի (համանշման) իրականացման հստակ մշակված համընդհանուր մոտեցումներ և դրա իրականացման մեթոդաբանություն:

Վերջին հինգ տարիներին ՊԴ անձնակազմի շարժն իրականացվել է կնքված պայմանագրերի շրջանակում (Արցախ, Թուրքմենիստան, Վրաստան և ԱՄՆ): Սակայն իրականացված այցելություններն ուսումնական գործընթացի բարելավման կամ դասավանդման մեթոդների արդիականացման տեսանկյունից չեն վերլուծվել, ինչը հիմք կտար դատելու այցելությունների արդյունավետության, շարժունությունը և միջազգայնացումը խթանող հիմքերի մասին: Չնայած ուսանողների շարժունության առկա հնարավորություններին (Թուրքմենիստանի և Հունաստանի հետ առկա ուսանողական փոխանակման ծրագիր)՝ այն չի իրագործվում, դեռևս խոչընդոտ է ուսանողների օտար լեզուների իմացության ցածր մակարդակը:

Որակավորումների միջազգային թափանցիկության և ակադեմիական ճանաչման բարելավման նպատակով՝ բուհն ուսանողներին տրամադրում է դիպլոմի հավելված, որը համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ/ՍԵՊԵՍ–ի կողմից մշակված ձևաչափին: Իր նոր ռազմավարական ծրագրով ինստիտուտը նպատակ ունի ընդլայնել իր ուսանողների և դասախոսների միջազգային շարժունության հնարավորությունները:

3.5 ՄԿԾ-ների մշտադիտարկումն, արդյունավետության գնահատումն ու բարելավումն ինստիտուտը նախատեսում է իրականացնել կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարգի հիման վրա, որով սահմանված են ՄԿԾ-ների բարելավման

հիմնական դրույթները և փուլերը: ՖԿՀՊԻ-ում ՄԿԾ-ների մշտադիտարկումն իրականացվում է ինչպես ուսումնական տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրի համապատասխան ամբիոնի վարիչի կողմից, այնպես էլ երկարաժամկետ կտրվածքով՝ ՄԿԾ-ի մեկ շրջափուլի ավարտին: Մշակվել է նաև առանձին դասընթացի գնահատման հարցաթերթ: Բարելավվել են ուսումնական պլանի ձևաչափերը: Ընդհանուր առմամբ մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականությունը նոր է և դեռևս չի գնահատվել և վերանայվել:

Որպես ՄԿԾ-ների մշտադիտարկման և բարելավման գործընթացների անաչառությունն երաշխավորող մեխանիզմներ ՄՈՒՀ-ը դիտարկում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, պրակտիկաների կազմակերպման և իրականացման բաժնի կողմից ստացված արձագանքները և ուսանողների արտադրական պրակտիկաների հաշվետվությունների ուսումնասիրությունը, սակայն հարկ է նշել, որ թվարկված գործիքները թերի են, քանի որ, թույլ չեն տալիս լիարժեք կերպով վեր հանել արտաքին շահակիցների և աշխատաշուկայի կարիքները, երբեմն կրում են ոչ ֆորմալ բնույթ:

Դատողություններ: Մասնագիտությունների կրթական ծրագրերը մշակված են ՖԿՀՊԻ-ի առաքելությանը համապատասխան, ընդ որում, համապատասխանությունն ավելի հստակ է 2016-2020թթ. ՌԾ-ում սահմանված առաքելության նկատմամբ: Կարևոր է, որ ՄՈՒՀ-ն աշխատանքներ է տանում արդի մասնագիտությունների ստեղծման ուղղությամբ, որպես օրինակ, ելնելով հասարակության և աշխատաշուկայի պահանջներից, ներդրել և հաջողությամբ իրականացնում է «Փրկարար» մասնագիտության կրթական ծրագիրը:

ՄԿԾ-ների կրթական վերջնարդյունքներն ընդհանուր առմամբ համահունչ են ՈԱՇ-ին, սակայն դեռևս հստակեցման և լրամշակման կարիք ունեն: Հստակեցման կարիք ունեն նաև ՄԿԾ-ների մեջ ներառվող առարկայական ծրագրերի գիտելիք, հմտություն և կարողություն բաղադրիչների ձևակերպումները: Դրանց ոչ հստակությունը վտանգի տակ է դնում դասավանդման մեթոդաբանության ընտրության և ձեռք բերված կոմպետենցիաների գնահատման արդյունավետությունը:

Իր ՌԾ-ում որպես առաքելության կարևորագույն մաս ՄՈՒՀ-ը նշում է, որ միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթական միջավայր, մինչդեռ ներկայում դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը, հիմնականում, կատարվում է դասախոսի ընտրությամբ՝ առարկայի առանձնահատկություններից ելնելով: Այս ոլորտում մշակված քաղաքականության բացակայությունը վտանգի տակ է դնում ուսանողակենտրոն ուսուցման համակարգի ձևավորման գործընթացը: Դասավանդման ժամանակակից մեթոդների ներդրումը կրթական համակարգում առայժմ բավարար չէ:

Դրական է, որ ՖԿՀՊԻ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն, իրականացրել է գիտելիքների գնահատման բարեփոխումների գործընթաց, գնահատման մեթոդներն ընդհանուր առմամբ համապատասխան են ուսումնառության վերջնարդյունքներին, սակայն, փորձագիտական խումբը կարծում է, որ բոլոր դասընթացների համար վերջնական գնահատականի ձևավորման բաղադրիչների կշիռների նույնականացված մոտեցումը կարող է խաթարել յուրաքանչյուր դասընթացի վերջնարդյունքների ձեռքբերումը չափելի դարձնելու գործընթացը, իսկ գնահատման հստակ ռուբրիկների ներդրումը կնպաստի գնահատման չափանիշների թափանցիկության և օբյեկտիվության բարձրացմանը և առավել հստակ կարտացոլի վերջնարդյունքի ձեռքբերման մակարդակը:

Փորձագիտական խումբը համարում է, որ գրագողության դեմ պայքարի մեխանիզմներին ՄՈՒՀ-ը չի անդրադառնում: Դրանք ակադեմիական ազնվության պահպանման կարևոր օղակներից են, ուստի և կարևոր է միջոցառումների ձեռնարկումը (համապատասխան համակարգչային ծրագրերի կիրառում)՝ գրագողության դեպքերը հայտնաբերելու և կանխելու նպատակով, ինչը կնպաստի ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորմանը:

ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ներն ունեն սահմանված կրթական վերջնարդյունքներ, որոնց համապատասխանությունն ավելի հստակ է 2016-2020թթ. ՌԾ-ում սահմանված առաքելության նկատմամբ: ՄԿԾ-ներն ունեն մոտեցումների ընդհանրացման և միասնականացման կարիք, քանզի իրականացվող միջոցառումներն առայժմ ենթակառուցվածքային չեն: ՄԿԾ-ների բարեփոխումների իրականացման հստակ քաղաքականություն և համընդհանուր մեխանիզմներ չկան: Նկատելի է, որ վերմշակումներն իրականացնելիս առանձնապես չի կարևորվում կարիքների վերհանումն ու դրանց վերլուծությունը:

ՖԿՀՊԻ-ն կարևորում է իր ուսանողների և դասախոսների շարժունությունն ու միջազգանացումը, սակայն չի դիտարկում իր ՄԿԾ-ների բարելավումը՝ որպես միջազգայնացման առաջնային գործոն: Ներկայացված չէ, թե ՖԿՀՊԻ-ն ինչ ուսումնասիրություններ է իրականացնում ՄԿԾ-ների համեմատության և դրա արդյունքում բարեփոխման նպատակով: Թեև բուհն ունի ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն, այնուամենայնիվ այնպիսի կարևորագույն հիմնահարց, ինչպիսին է մագիստրատուրայի ուսուցմանը հատկացված տևողությունը (1 տարի) չի վերհանվել: Այն, ըստ բուհի շահակիցների, բավարար չէ և կարող է հանգեցնել կիրառական և հետազոտական հմտությունների ոչ լիարժեք ձևավորմանը: ՄԿԾ-ների համակարգային մշտադիտարկման իրականացումը, բենչմարքինգը, լավագույն փորձի տարածումը ՖԿՀՊԻ-ին թույլ կտան ունենալ ժամանակակից ծրագրեր՝ ապահովելով բուհի շահեկան դիրքը տարածաշրջանի կրթական ծառայությունների դաշտում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, ձևակերպված են ՀՀ ՈԱՇ-ին համապատասխան կրթական վերջնարդյունքներով, ինչպես նաև այն, որ բուհն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն, որն, ընհանուր առմամբ, վերջնարդյունքամետ է, կարևորում է իր կրթական ծրագրերի բովանդակային համահունչությունն այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին, ունի հաստատված ՄԿԾ-ների մշակման և մշտադիտարկման կարգ, կարելի է եզրակացնել, որ ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և միտված են նպաստելու շարժունությանը և միջազգայնացմանը:

Եզրակացություն: ՖԿՀՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՖԿՀՊԻ-ն ուսանողների հավաքագրումն իրականացնում է դպրոցների ավագ դասարանների աշակերտների, քոլեջների շրջանավարտների և զորացրվող զինծառայողների շրջանում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների միջոցով: Բուհի պաշտոնական կայքում գործում է «Դիմորդ» բաժինը, որտեղ տեղեկատվություն է տեղադրվում ՖԿՀՊԻ մասնագիտությունների, ընդունելության կարգի և այլ անհրաժեշտ հարցերի վերաբերյալ: ՖԿՀՊԻ-ում բակալավրիատի առկա ուսումնառության համակարգի ուսանողների ընդունելության և մրցույթի կազմակերպման գործընթացներն իրականացվում են ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակված դիմորդների ընդունելության կարգերին համապատասխան միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններով: Հեռակա ուսուցման համակարգում

ուսանողների համալրումն իրականացվում է ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա:

Մագիստրատուրայում ընդունելության համակարգն ունի երկու փուլ՝ առաջին փուլում ընդունվում են ՄՈՒՀ-ի տվյալ տարվա բակալավրիատի շրջանավարտները, որոնք ունեն հարաբերականորեն բարձր առաջադիմություն, երկրորդ փուլում նախատեսված է վճարովի համակարգում ընդունելություն այլ բուհերի շրջանավարտների և պարտադիր զինվորական ծառայությունն ավարտած անձանց համար:

4.2 ՖԿՀՊԻ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման գործիք են հանդիպումները ռեկտորի և դեկանների հետ՝ առանց հստակ սահմանված և հաստատված ժամանակացույցի: Ուսումնառության հետ կապված հարցերի դեպքում ուսանողը դիմում է պրոֆեսորադասախոսական անձնակազմին կամ ամբիոնի վարիչին, ինչպես նաև խորհրդատուներին:

ՄՈՒՀ-ում ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմ է համարվում նաև ֆակուլտետներում մասնագիտական խորհրդատուների գործող համակարգը, որոնց գործառույթներն, իրավունքներն ու պարտականություններն ամրագրված են կանոնադրությամբ: ՖԿՀՊԻ-ում ուսանողների սոցիալ-տնտեսական կարիքները բավարարելու նպատակով գործում է ուսանողական նպաստների և վարձավճարների փոխհատուցման կարգ: Վերջին երեք տարիների ընթացքում կտրուկ աճել է զեղչային համակարգից օգտվող ուսանողների քանակը:

ՖԿՀՊԻ-ն 2013թ.-ին ուսանողների շրջանում անցկացրել է հարցումներ՝ պարզելու ՄՈՒՀ-ի ռեսուրսների և ծառայությունների վերաբերյալ նրանց կարծիքը, որոնց արդյունքում փորձ է արվում վերհանել ուսանողների կարիքները: Սակայն վերոնշյալ հարցումները եղել են փորձնական, չեն կրել պարբերական բնույթ: ՄՈՒՀ-ը չի իրականացրել այս հարցումների արդյունքների հիման վրա բարելավմանը միտված գործողությունների պլանավորում:

4.3 ՄՈՒՀ-ում գործում է նախկին կուրատորական, ներկայիս խորհրդատվական ինստիտուտը: Խորհրդատուների հիմնական խնդիրն է ակտիվորեն մասնակցել ուսանողների շրջանում կազմակերպվող ուսումնադաստիարակչական, մարզական և հասարակական աշխատանքներին: Խորհրդատուները հաշվետու են ֆակուլտետի խորհրդատուին, վերջինս էլ՝ դեկանատին: Ժամանակացույցը և պատասխանատուների ցուցակն առկա է ամբիոնում: Ինստիտուտում գործում է նաև ամբիոնական հերթապահությունների կարգ՝ յուրաքանչյուր շաբաթ մեկ ամբիոն պատասխանատու է խորհրդատվության, տեղեկատվության, աջակցության ինչպես նաև կարգապահության համար: Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ են կազմակերպվում նաև պրակտիկայի ընթացքում: ՄՈՒՀ-ում առանձնակի ուշադրություն է դարձվում լրացուցիչ պարապմունքներին, առկա է դրանց անցկացման համար հստակ ժամանակացույց և հաճախելիության մատյան, այնումանայնիվ խորհրդատվական և լրացուցիչ պարապմունքների արդյունավետության գնահատման մեխանիզմներ բուհում չեն ներդրված:

4.4 Ուսանողները վարչական անձնակազմից օժանդակություն ստանալու նպատակով դիմում են ուսանողական խորհրդին, որն էլ ներկայացնում է բարձրացված հիմնահարցերը ֆակուլտետների, ինստիտուտի գիտական խորհուրդներում, ամբիոնի վարիչին կամ դեկանին: Ինստիտուտի ռեկտորն ուսանողների հիմնահարցերին ծանոթանալու նպատակով կազմակերպում է ընդունելություն յուրաքանչյուր հինգշաբթի: Վարչական անձնակազմին դիմելու կանոնակարգ չկա, սակայն յուրաքանչյուր ուսանող կարող է ցանկացած պահի իրեն անհանգստացնող հարցերի վերաբերյալ դիմել վարչական անզնակազմին:

Կրթական համակարգին առնչվող հարցերի վերաբերյալ խորհրդատվություններ է կազմակերպում նաև ՈԱ բաժինը: Ուսանողներին օժանդակելու նպատակով ինստիտուտում գործում է վարձավճարների զեղչման կանոնակարգ:

ՖԿՀՊԻ-ում ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով 2015-2016 ուս. տարում պլանավորվում է մշակել վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

4.5 2012թ.-ից ՖԿՀՊԻ-ում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցման համար հիմնականում պատասխանատու է կարիերայի կենտրոնը (ԿԿ), որի խնդրներն ու գործառույթներն ամրագրված են կենտրոնի կանոնադրությամբ: Կենտրոնի նպատակն է՝ ուղղորդել, համակարգել և ամփոփել ուսանողների և շրջանավարտների աշխատաշուկա մուտք գործելու գործընթացն, ապահովել գործատուների և շրջանավարտների միջև համագործակցության կապը:

Փորձագիտական այցի արդյունքները փաստում են, որ գործատուների հետ համագործակցային ծրագրեր հիմնականում իրականացվում են ամբիոնների միջոցով, սակայն կարելի է նշել, որ այդ պարտականությունը վերապահված է կարերիայի կենտրոնին՝ համաձայն վերջինիս կանոնադրության: Կարիերայի կենտրոնի աշխատանքների վերաբերյալ որևէ փաստ չնշվեց հանդիպումների ժամանակ, ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստելու և այդ կապերի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ չեն իրականացվել համակարգային քայլեր: Կարիերայի կենտրոնը դեռ ամբողջովին ինտեգրված չէ ինստիտուտի կյանքին:

4.6 ՖԿՀՊԻ-ում ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու գործընթացում մասնակցում են ուսանողական գիտական ընկերությունը, գիտահետազոտական կենտրոնը և գիտատեղեկատվական բաժինն՝ ամբիոնների հետ համատեղ: Յուրաքանչյուր ամբիոնում առկա է գիտական գծով ներկայացուցիչ, ով նպաստում է ուսանողների հետազոտական աշխատանքների կազմակերպմանը: Մշակվում են ուսանողների գիտահետազոտական աշխատանքների թեմաներ, իսկ գիտատեղեկատվական բաժինն իրականացնում է դրանց պլանավորումը, կոորդինացումը և հսկումը:

ՖԿՀՊԻ-ն ներկայացրել է գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունն ըստ կրթական ծրագրերի 2011-2015թթ. ժամանակահատվածի համար, որի համաձայն բակալավրի կրթական ծրագրում ուսանողների մոտ 50%-ը, իսկ մագիստրատուրայում բոլոր ուսանողները ներգրավված են տարբեր գիտահետազոտական ծրագրերում (2011-2015թթ.-ին հանրապետական գիտամեթոդական և այլ ժողովածուներում ուսանողների համահեղինակությամբ տպագրված գիտական աշխատանքների թիվն աճել է 51%-ով):

4.7 Ուսանողական խորհուրդը (ՈւԽ) ՖԿՀՊԻ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության անկախ մարմինն է, որի գործունեությունն ամրագրված է խորհրդի կանոնակարգով՝ հաստատված 2012թ.-ի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում: Ուսանողական խորհրդի գործառույթները նախատեսում են ուսանողների շահերի պաշտպանությունն ուսումնակրթական գործընթացում: ՖԿՀՊԻ ուսանողական խորհուրդն ակտիվորեն մասնակցում է ուսանողներին առնչվող հիմնախնդիրների բարձրաձայնմանը, իրականացնում է խորհրդատվական աշխատանքներ, մասնավորապես՝ առաջին կուրսի ուսանողների շրջանում՝ կրթական, մշակութային և այլ ուղղություններով, ինչպես նաև իր մասնակցություն է ունենում հասարակական և սոցիալական խնդիրների լուծմանը: ՈւԽ անդամ կարող են դառնալ հասարակական ակտիվություն և ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները, սակայն խորհրդում տիրող բարենպաստ միջավայրը թույլ է տալիս ցանակացած ուսանողի ինտեգրվելու հնարավորություն այդ մարմնում և վերջինիս իրականացրած միջոցառումներում:

Ուսանողի իրավունքները և պարտականությունները սահմանված են բուհի և ուսանողի միջև կնքվող պայմանագրում:

4.8 ՖԿՀՊԻ-ում մշակվել է որակի ապահովման ձեռնարկ, որակի ներքին ապահովման հայեցակարգ, որում ընդգրկված է ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մոտեցումները: Ուսանողների կրթական ծառայությունների գնահատման գործիք են դասալսումները, հարցման ձևաթերթերը, վերջինիս արդյունավետությունը ՄՈՒՀ-ը դեռևս չի վերլուծել: Ըստ ինքնավերլուծության զեկույցի՝ ՖԿՀՊԻ-ի ԿՀՈԱ բաժինն ուսումնառության որակի ապահովման ուղղությամբ ուսանողների շրջանում կազմակերպում է հանդիպումներ, սեմինարներ՝ պարզաբանելու ուսումնական գործընթացի խնդիրները:

ՖԿՀՊԻ-ում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների մշտադիտարկման, գնահատման և որակի ապահովման մեխանիզմները դեռևս մշակված չեն:

Դատողություններ: ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմներ, ուսանողների ներհոսքը գերազանցում է արտահոսքին, ինստիտուտը ձեռնարկում է միջոցներ հեռացումների պատճառները նվազեցնելու, և վերջին հինգ տարիների կտրվածքով հեռացումներ եղել են միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: ՄՈՒՀ-ը փորձում է կիրառության մեջ դնել ուսանողների կարիքների վերհանման գործիքներից մեկը՝ հարցումները, որի արդյունքների վերլուծությանը և բարելավմանը միտված գործողությունների պլանի բացակայությունը ռիսկի տակ է դնում մեխանիզմի արդյունավետությունը:

ՖԿՊՀԻ-ն ուսանողներին տրամադրում է օժանդակություն և ուղղորդում, ՄՈՒՀ-ում գործում է ուսման վարձի կանոնակարգված զեղչային համակարգ, սակայն վարչական անձնակազմից օժանդակություն ստանալու սահմանված կանոնակարգի և ժամանակացույցի բացակայությունը կարող է հանգեցնել ուսանողների կարիքների վերհանման գործընթացի արդյունավետության անկմանը, ուստի և գործընթացը դեռևս կանոնակարգման անհրաժեշտություն ունի:

Ընդհանուր առմամբ, ուսանողների կարիքների բացահայտման համակարգային մոտեցման բացակայությունը խոչընդոտում է ուսանողների համար արդյունավետ բազմակողմանի աջակցության համակարգի ձևավորմանը:

Կարիերայի կենտրոնն արդեն բավական ժամանակ գործում է, այնուամենայնիվ, անհասկանալի է՝ որքանով է վերջինս նախապատրաստում ուսանողներին աշխատաշուկա մուտք գործելուն և իրականացնում աշխատաշուկայի վերլուծություն: ՖԿՀՊԻ-ում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների մշտադիտարկման, գնահատման և որակի ապահովման մեխանիզմների բացակայությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ ուսանող-բուհ փոխհարաբերության արդյունավետության տեսանկյունից, դրանց համակարգումը թույլ կտա վստահելի տեղեկատվություն ունենալ ՄՈՒՀ-ի ուսանողների կարիքների բավարարման մակարդակի վերաբերյալ:

Թեև բուհի ուսանողներին հասանելի է Կրթության ազգային ինստիտուտի կողմից մշակված «Ուսանողի ուղեցույց», այնուամենայնիվ ՄՈՒՀ-ը դեռևս չի մշակել սեփական ուղեցույց, ինչը կարող է նվազեցնել ուսանողների՝ իրենց ներբուհական իրավունքների մասին տեղեկացվածության աստիճանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ուսանողների հավաքագրման և ընտրության քաղաքականությունների և ընթացակարգերի առկայությունն, ուսանողների կարիերայի հետագծման մոտեցումները, նրանց շահերը ներկայացնող մարմնի՝ ուսանողական խորհրդի ծավալած գործունեությունն՝ ուղղված կրթական, հասարակական և սոցիալական միջավայրի բարելավմանը, ուսանողների բավարարվածության մակարդակն ուսումնական միջավայրից և այն, որ բուհում ուսանողները դիտվում են որպես գործընկեր, կարելի է եզրակացնել, որ ինստիտուտն ուսանողներին տրամադրում է բավարար չափով աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Եզրակացություն: ՖԿՀՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՖԿՀՊԻ-ն 2011-2015թթ.-ի ռազմավարական ծրագրի նպատակներում պլանավորել է ձևավորել և զարգացնել որակյալ կադրային ներուժ:

ՄՈՒՀ-ն պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴԿ) ընտրությունը կատարվում է ՀՀ ԿԳ նախարարության մշակած մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման օրինակելի կարգի հիման վրա 2009թ.-ի գիտական խորհրդի նիստում հաստատած «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման» կանոնակարգով, որն ամրագրում է դասախոսական կազմի մրցութային ընտրությունը, տարակարգերը, առաջընթացի չափանիշները: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության քաղաքականության հիմքում ընկած են չափանիշներ, որոնք հաշվի են առնում դասախոսների ընդհանուր մանկավարժական, տվյալ մարզաձևում ակնհայտ ձեռքբերումները և կազմակերպչական ունակությունները:

ՖԿՀՊԻ-ում աշխատում է 213 դասախոս, որոնցից 89,6%՝ հիմնական: Ինստիտուտում գործող տարակարգերի հարաբերությունն է՝ պրոֆեսոր՝ 14,2 %, դոցենտ՝ 18,4 %, դասախոս՝ 24,5% և ասիստենտ՝ 42,9 %[5]: Նշենք նաև, որ ՖԿՀՊԻ-ում կան ամբիոններ, որտեղ չեն պահպանվում 3 գիտական աստիճան ունեցող դասախոսների թվի վերաբերյալ օրենքի պահանջները: Թեև 2011-2015թթ.-ի ընթացքում նկատելի է գիտական աստիճան ունեցող դասախոսների թվաքանակի ցածր աճ (4,4%), այդուհանդերձ, հատկանշական է ՄՈՒՀ-ի մասնագիտական առանձնահատկությունը, քանի որ, դասախոսական կազմի 24,3%-ը սպորտի վարպետներ են, 13,1%-ը՝ սպորտի վաստակավոր աշխատողներ, 8%-ը՝ վաստակավոր մարզիչներ, 3,3%-ը՝ վաստակավոր գործիչներ:

Ուսումնաօժանդակ կազմի ընտրությունն իրականացվում է ելնելով կրթական ծրագրերի առանձնահատկություններից: Ընտրությունը հիմնականում կատարվում է լավագույն շրջանավարտների թվից, ովքեր ավարտել են տվյալ մասնագիտության մագիստրոսական ծրագիրը: ՖԿՀՊԻ-ում 2012թ.-ին հաստատվել է ռեկտորի հրահանգն ուսումնաօժանդակ կազմի նշանակման և ատեստավորման կարգի վերաբերյալ, սահմանվել են լաբորանտների իրավունքներն ու պարտականությունները: ՄՈՒՀ-ում գործում է թվով 43 ուսումնաօժանդակ կազմ, որից 17՝ լաբորանտներ, 18՝ ավագ լաբորանտներ, մնացածը օժանդակ կազմն է:

ՖԿՀՊԻ-ում պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքի վերընտրության և հեռացման քաղաքականության մեխանիզմ է աշխատանքային գործունեության գնահատման և խրախուսման կարգը, դասալսումները, սոցիոլոգիական հարցումները, ատեստավորման եզրակացությունները: Նշված քաղաքականությունը հիմնականում նոր է, ուստի արդյունավետությունը դեռևս վերլուծության չի ենթարկվել:

5.2 Թեև ՖԿՀՊԻ-ն յուրաքանչյուր կրթական ծրագրի համար պրոֆեսորադասախոսական կազմ ընտրելիս հիմք է ընդունում մասնագիտական կրթությունը, որակավորումը, աշխատանքային փորձը՝ դասավանդման, մարզչական, բժշկական, մարզաձևերին տիրապետելու տեխնիկան և մեթոդիկան, սպորտային նվաճումները և կոչումները,

---

[5] Փոփոխությունը կատարվել է 16.05.2016թ.-ին բուհի ներկայացրած գրության հիման վրա:

ուսանողների կարծիքը, վերընտրման դեպքում նաև վարկանիշն, այդուհանդերձ, շահակիցներին հասանելի դարձնելու տեսանկյունից այն ունի հստակեցման և փաստաթղթավորման անհրաժեշտություն:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ՊԴ անձնակազմը ձևավորելիս ՖԿՀՊԻ-ն հիմնականում օգտվում է սեփական կադրային բազայից (շուրջ 66%), մնացածը կազմում են ԵՊՀ-ի (10%), մանկավարժական (6,5%), բժշկական (5.6%), լեզվաբանական (4,7%) և այլ համալսարանների շրջանավարտները:

ՄՈՒՀ-ը դեռևս չի մշակել դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի պաշտոնի անձնագրեր կամ աշխատանքային նկարագրեր:

5.3 ՖԿՀՊԻ-ն դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար սահմանել է մի շարք ընթացակարգեր՝ ՊԴԱ կազմի գործունեության որակի վարկանիշային գնահատման կարգ, դասախոսների և այլ աշխատողների աշխատանքային գործունեության գնահատման և խրախուսման կարգ (ինքնագնահատում, ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածություն գնահատման գործընթացում), դասալսումների գնահատում, ուսանողի կողմից դասախոսի գնահատում, անվանակարգի ամենամյա մրցույթ:

Ինչպես փորձագիտական խումբը նկատեց այցի ընթացքում՝ դասախոսական կազմի գնահատման ձևաթերթերը լրամշակվել և կատարելագործվել են, ուսանողների բավարարվածությունը դասախոսական որակներից բավականին բարձր է:

ՄՈՒՀ-ում սահմանված դասախոսների գնահատման ընթացակարգերի և քաղաքականության արդյունավետությանը վերաբերող ամբողջական վերլուծություն չի իրականացվել, բացակայում են գնահատման արդյունքում ՊԴԿ-ի առաջխաղացման կոնկրետ օրինակներ:

5.4 ՖԿՀՊԻ-ն 2012թ. հաստատել է ՊԴԿ-ի (ներառյալ ստաժորներ և երիտասարդ դասախոսներ) որակավորման բարձրացման և վերապատրաստման կանոնակարգը, որը սահմանում է հինգ տարին մեկ անգամ պարտադիր կարգով վերապատրաստում երեք ուղղություններով՝ օտար լեզու, համակարգչային հմտություններ և կրթական համակարգի բարեփոխումներ՝ կրեդիտների կուտակման սկզբունքով: Ընթացակարգի հաստատումից հետո ՖԿՀՊԻ-ն կազմակերպել է դասախոսների և ուսումնաօժանդակ անձնակազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման երեք ներինստիտուտային և երկու միջազգային դասընթացներ: Բելգիայի Թոմաս Մոր Համալսարանի քոլեջի և Լյուվենի կինեզիոլոգիայի ֆակուլտետի հետ համագործակցության շրջանակում կազմակերպվել է երկու տեսակոնֆերանս դասավանդման նոր մոտեցումների շուրջ, սակայն ազդեցության վերլուծություն չի կատարվել:

Թեև ՖԿՀՊԻ-ն քայլեր է իրականացնում դասախոսների մասնագիտական փորձի փոխանակման առումով, այնուամենայնիվ, փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ինստիտուտում դեռևս բացակայում է մասնագիտական որակների բարձրացմանը նպաստող հստակ քաղաքականություն, այն հիմնականում կրում է անհատական բնույթ, ինչն այդքան էլ հուսադրող չէ: Գործատուները ևս կարևորեցին դասախոսների շարժունության անհրաժեշտությունը՝ հավելելով, որ այն կնպաստի մասնագիտական որակների կատարելագործմանը: ՄՈՒՀ-ն իրականացնում է դասախոսների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, սակայն մասնագիտական կարիքների վերհանում չի իրականացվել, գնահատված չէ նաև որակավորման դասընթացների արդյունավետությունը:

5.5 ՖԿՀՊԻ-ում ՊԴԿ-ով ապահովվածության կայունության գրավականն այն է, որ ինստիտուտում գործող դասախոսական կազմի ավելի քան 90% աշխատում է հիմնական պայմանագրային հիմունքներով, ունի մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան որակավորումներ, իսկ դասախոս/ուսանող հարաբերակցությունը 1/10 է: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ շրջանավարտներն հետագայում շարունակում են կարիերան ՄՈՒՀ-ում, դրա վկայությունն է, որ ինստիտուտի

դասախոսական կազմի գերակշիռ մասը ձևավորվում է սեփական կադրային ռեսուրսներից: Դրական է նաև, որ հանձին շրջանավարտների՝ ինստիտուտում ձևավորվում է հետադարձ կապի մեխանիզմը: Թեև ՊԴԿ-ի շուրջ 21%-ը 65 և ավելին տարիք ունեցող դասախոսներն են, ՄՈՒՀ-ն ունի երիտասարդացման միտում: Այդ առումով պլանավորվում է մշակել կադրային ներուժի պահպանման և գիտակրթական համակարգում աստիճանական սերնդափոխության սահուն համակարգ: ՖԿՀՊԻ-ն կադրային ներուժի համալրման աշխատանքներն իրականացնում է ասպիրանտուրայում սովորող երիտասարդ կադրերի ընտրությամբ: ՖԿՀՊԻ-ի դասախոսական կազմի գերակշիռ մասը ներգրավված է ինչպես ինստիտուտի շրջանակներում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում, այնպես էլ հանրապետության ազգային հավաքական և օլիմպիական թիմերի բժշկակենսաբանական հետազոտություններում՝ դրանով իսկ ձևավորելով գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածություն:

ՊԴԿ-ի կայունությունն ապահովող քաղաքականության նախագիծը մշակման փուլում է, նախատեսվում է, որ դասախոսական կազմի խրախուսման կարգը կգործի 2015-2016 ուստարվանից:

ՖԿՀՊԻ-ն չի իրականացրել ՊԴԿ-ի հոսունության և մասնագետների պահանջարկի վերլուծություն:

5.6 ՖԿՀՊԻ-ն սահմանել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի առաջընթացն ապահովելուն ուղղված ընթացակարգեր: Այդ առումով 2009թ.-ի գիտական խորհրդի նիստում հաստատվել է ՊԴԿ-ի ձևավորման կանոնակարգը, որտեղ զետեղված են դասախոսական կազմի տարակարգերի ձևավորման, պաշտոնների տեղակալման և առաջընթացի չափանիշները: 2015թ.-ին հաստատվել և դեռևս նոր է շրջանառության մեջ մտել աշխատակիցների աշխատանքային գործունեության գնահատման և խրախուսման կանոնակարգը. մոտիվացման նպատակով ենթադրվում է նյութական խրախուսում կամ խրախուսում ուղղված մասնագիտական որակների բարելավմանը (ստաժավորում, ուսուցում):

Երիտասարդ դասախոսների մասնագիտական առաջընթացն օժանդակելու նպատակով ինստիտուտում ամբիոնի ավագ դասախոսների, ուսումնամեթոդական հանձնաժողովի, դեկանատների աշխատակիցների կողմից կազմակերպվում են դասալսումներ, բաց դասեր, խորհրդատվություններ:

ՊԴԿ-ը կարող է անվճար տպագրել գիտական հոդվածները պարբերաբար հրատարակվող «Գիտամեթոդական կոնֆերանսի նյութերի ժողովածու» հանդեսում:

ՖԿՀՊԻ-ն դասախոսների մասնագիտական առաջընթացի քաղաքականության արդյունավետության վերլուծություն դեռևս չի իրականացրել:

5.7 ՖԿՀՊԻ-ի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով: ՖԿՀՊԻ-ի վարչական անձնակազմն ընդգրկում է 20 աշխատակից, իսկ ուսումնաօժանդակը՝ 43, սակայն նրանց գործունեության գնահատում չի իրականացվում, ինչպես նաև չեն կազմակերպվում վարչական անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ:

Վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի գործունեության արդյունավետության գնահատման կարգերը դեռ փորձարկման փուլում են: Ինչպես բուհը փաստում է ինքնավերլուծության զեկույցում՝ ուսումնաօժանդակ անձնակազմի գործունեության վերահսկման գործընթացը կանոնակարգված չէ և մշակման կարիք ունի:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՖԿՀՊԻ-ում գործում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության կանոնակարգ, համալրման տարակարգեր և դրանց ներկայացվող չափանիշներ, ուսումնաօժանդակ կազմի նշանակման և ատեստավորման կարգ, ինչը կնպաստի ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերն իրականացնելու

համար անձնակազմի կանոնակարգված ընտրությանը: Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ը մշակել է աշխատակիցների աշխատանքի վերընտրության և հեռացման մեխանիզմներ, այդուհանդերձ, գործիքների նորաստեղծ լինելը հնարավորություն չի ընձեռում դեռևս գնահատելու դրանց արդյունավետությունը:

Այն փաստը, որ ՖԿՀՊԻ-ում յուրաքանչյուր կրթական ծրագրի համար գործում և ընտրվում է մասնագիտական որակների պահանջներին համապատասխան ՊԴԿ, թույլ է տալիս դատել, որ հաստատությունում հաշվի են առնվում դասավանդողների մասնագիտական ուղղվածությունը և կոմպետենցիաները, որակները և հմտություններն, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարծում է, որ ինստիտուտը պետք է հստակ սահմանի և շահակիցներին հասանելի դարձնի յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար դասախոսական անձնակազմի ընտրության չափանիշները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՖԿՀՊԻ-ն մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավման նպատակով սահմանել է դասախոսական կազմի գնահատման ընթացակարգեր, մշակել դասախոսության և դասախոսի որակը գնահատելու գործիքներ, այդուհանդերձ, մեխանիզմի վերլուծության բացակայությունը հնարավորություն չի ընձեռում դատել ընդունված քաղաքականության արդյունավետության մասին:

Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ը սահմանել է ՊԴԿ-ի որակավորման բարձրացմանն և վերապատրաստմանը միտված ընթացակարգեր, որոնց գործարկման նպատակով իրականացրել է գործառույթներ և միջոցառումներ, սակայն փորձագիտական խումբը կարծում է, որ վերջիններիս արդյունավետության վերլուծության և կարիքների վերհանման բացակայությունը վտանգում է հիմնական խնդիրների բացահայտումը, նպատակների լիարժեք իրագործումը: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական վերապատրաստումների հստակ քաղաքականության բացակայությունը լուրջ խնդիրներ կարող է առաջացնել ՄԿԾ-ների նպատակների իրագործման, կադրային ռեսուրսի շարունակական զարգացման և շարժունության տեսանկյունից:

Թեև ՄՈՒՀ-ը դեռևս ունի երիտասարդ կադրերով համալրման խնդիր, այդուհանդերձ, փորձագիտական խումբը համարում է, որ ՖԿՀՊԻ-ն ապահովված է մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան որակավորումներ և սպորտային կոչումներ ունեցող անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական կազմով, և երաշխավորում է ապահովվածության կայունությունը:

Հատկանշական է, որ ՖԿՀՊԻ-ն սահմանել է ՊԴԿ-ի առաջընթացի ապահովման, աշխատակիցների գործունեության գնահատման և խրախուսման ընթացակարգեր, իրականացնում է միջոցառումներ՝ միտված երիտասարդ դասախոսների կրթական և գիտական առաջընթացին, սակայն փորձագիտական խումբը համարում է, որ դասախոսների մասնագիտական առաջընթացի քաղաքականության արդյունավետության վերլուծությունը կնպաստի առավել ինտենսիվ առաջընթաց ապահովելուն, ինչն ուղղակիորեն կանդրադառնա մատուցվող կրթական ծառայությունների որակի վրա:

ՖԿՀՊԻ-ն փորձում է իր ռազմավարական նպատակների իրականացման համար ձևավորել անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ սահմանված կանոնակարգերի կիրառման միջոցով: Սակայն աշխատակազմի ձևավորման նորմատիվների, նրանց գործունեության գնահատման հստակ մեխանիզմների և գործիքների բացակայության պայմաններում բուհի համար անհնարին կլինի վերլուծել և գնահատել կատարվող աշխատանքի արդյունավետությունը: Ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության արդյունավետության վերլուծության բացակայությունը կհանգեցնի ուսումնական գործընթացի ոչ լիարժեք իրագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն փաստը, որ ՖԿՀՊԻ-ում գործում է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության, գնահատման ընթացակարգեր, ապահովված է յուրաքանչյուր կրթական ծրագրին համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող դասախոսական կազմով, որը չափազանց նվիրված է իր կոչմանն, իրականացնում է կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունն առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ի

նպատակներն իրականացնելու համար ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Եզրակացություն: ՖԿՀՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՖԿՀՊԻ-ի 2011-2015թթ.-ի ՌԾ-ում նպատակ է հետապնդում հետազոտական ոլորտում երիտասարդության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման, հասարակության առողջ ապրելակերպի կարիքներին համահունչ հետազոտական ծրագրերի ստեղծումը և իրականացումը: ՖԿՀՊԻ-ում առկա է հետազոտական հետաքրքրություններն արտահայտող երկարաժամկետ ռազմավարական 3 ոլորտ՝ 1.ֆիզիկական դաստիարակության տեսություն, մեթոդիկա և սպորտային պատրաստություն, 2.ֆիզիկական կուլտուրայի, սպորտի պատմություն, կառավարում և սոցիոլոգիա, 3.ֆիզիկական կուլտուրայի, սպորտի բժշկակենսաբանություն և հոգեբանություն: Հարկ է նշել, որ ինստիտուտի աշխատակիցները հնարավորություն ունեն նաև հետազոտություններ կատարել նշված ուղղությունների շրջանակներից դուրս: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի դասախոսական անձնակազմը ներգրավված է ոչ միայն ինստիտուտի հետաքրքրություններն արտահայտող հետազոտություններում, այլ նաև ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության, օլիմպիական և սպորտի կոմիտեների հետազոտական տիրույթներում:

ՖԿՀՊԻ-ում այս առումով գործում են գիտահետազոտական կենտրոն՝ ԳՀԿ, գիտատեղեկատվական և մագիստրատուրայի բաժիններն՝ իրենց կանոնադրություններով, աշխատակազմի տարակարգերով, իրականացվող գործառույթներով, կատարողականի հաշվետվություններով: ԳՀԿ-ի գործառույթներն են՝ գիտահետազոտական թեմաների կատարումը և հանրապետության օլիմպիական և ազգային հավաքական թիմերի մարզիկների ֆիզիկական պատրաստականության բժշկակենսաբանական հետազոտության պահովումը, որի արդյունքում նախատեսվում է մշակել ոլորտին առնչվող նորմատիվներ: ԳՏԲ-ի գործառույթներն են՝ գիտական թեմաների պլանավորումը և կորդինացումն, ինստիտուտի գործունեության տեղեկատվական նյութերի հավաքագրումը, դրանց մուտքագրումը կայքում և պարբերական թարմացումը:

Փորձագիտական խումբը կարծում է, որ ՖԿՀՊԻ-ն ունի հետազոտական ոլորտում ռազմավարական գերակայություններ և դրանց իրականացման համար գիտական ներուժ: Այնուամենայնիվ, հետազոտության ոլորտում ՖԿՀՊԻ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարության արդյունավետության վերլուծություն և գնահատման կառուցակարգեր չկան, իսկ ՌԾ-ի ցուցիչները դեռևս անկատար են և ունեն հստակեցման անհրաժեշտություն: ՄՈՒՀ-ում հետազոտությունը չի դիտարկում որպես եկամտի աղբյուր:

6.2 ՖԿՀՊԻ-ում մշակվել և հաստատվել է ինստիտուտի գիտահետազոտական գործունեությանը վերաբերող մեթոդական ցուցումներ, ուր ամրագրված են հետազոտական ոլորտում իրականացվող ծրագրերի տևողությունը՝ երկարաժամկետ (5 տարի և ավելին), միջնաժամկետ (3-5 տարի) և կարճաժամկետ (մինչև 3 տարի) պլանավորում և հանձնարարականներ: ՖԿՀՊԻ-ն նախանշել է հետազոտական աշխատանքների ռազմավարական ուղղությունները, որի իրականացմանն ընդգրկված են բոլոր ամբիոնները և գիտական կենտրոնը: Կարճաժամկետ ծրագրի շրջանակում (2014-2015թթ.) ՄՈՒՀ-ի 18

ամբիոնների աշխատակիցների 80% ներգրավվել են միջամբիոնային և անհատական գիտական թեմաներում, հանրապետության ազգային հավաքական թիմերի մարզիկների և համաշխարհային ուսանողական խաղերի մասնակից թիմերի բժշկակենսաբանական հետազոտություններում, մշակվել են մի շարք ծրագրեր (դոպինգի և հակադոպինգային վերահսկողություն, նախավարժանքների անհատականացում, սրտագրի հիման վրա ֆունկցիոնալ վիճակի գնահատում): Միջնաժամկետ ծրագրերի (2011-2013թթ.) իրագործման կատարողականի ցուցիչներն են՝ մարզիկների գիտահետազոտական սպասարկման արդյունքները (57,2%), գիտական հոդվածները և թեզերը (23,8%), մագիստրոսական թեզերը, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներն, արդյունքների ներդրման ակտերն ու ատենախոսությունները:

6.3 ՖԿՀՊԻ-ն հետազոտության ոլորտում իր հետաքրքրությունների իրագործման նպատակով ուսումնասիրություններ է ծավալում ՀՀ հավաքական թիմերում, մարզադպրոցներում, հանրակրթական հաստատություններում: ՄՈՒՀ-ը հետազոտությունների իրականացման և զարգացման նպատակով մշակել է քաղաքականություն, որի իրագործման համար պատասխանատու է գիտական գծով պրոռեկտորը և ԳԿՀ-ն: Գիտական հոդվածների, ուսումնամեթոդական ձեռնարկների և ավարտական աշխատանքների գրախոսությունը, հրատարակությունը և/կամ պաշտպանության թույլտվությունը կանոնակարգված է համապատասխան ընթացակարգերով:

ՖԿՀՊԻ-ում հետազոտությունների զարգացման քաղաքականության իրականացման ցուցիչներ են՝ միջամբիոնային համագործակցությունները՝ մասնագիտական, բնագիտական և բժշկական (սպորտային բժիշկներ), գիտնականների գիտական գործուղումները, միջազգային համաժողովների կազմակերպումը, տարեկան հաշվետվությունը:

Հետազոտությունների կատարմանն օժանդակելու նպատակով՝ ՄՈՒՀ-ը պլանավորում է տարեց տարի ավելացնել գիտահետազոտական բազայի զարգացման բյուջետային ֆինանսավորումն, աշխատանքներ է կատարում հետազոտողներին ապահովելու ժամանակակից գրականությամբ, կազմակերպում է ամենամյա մրցանակաբաշխություն, հնարավորության սահմաններում հրատարակում է գիտական աշխատանքները սեփական միջոցներով, կարևորվում է ամբիոնի կողմից հետազոտողներին, ուսանողներին ցուցաբերվող օժանդակությունը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ յուրաքանչյուր ամբիոնում առկա է նաև գիտական գծով ներկայացուցիչ, ով նպաստում է ուսանողների և ստորաբաժանման հետազոտական աշխատանքների կազմակերպմանը: Փորձագիտական խումբը կարծում է, որ ՄՈՒՀ-ը սահմանել է հետազոտությունների իրականացման քաղաքականություն, այնուամենայնիվ, մեխանիզմների արդյունավետության մշտադիտարկում չի կատարվել, թերի է ամբիոնների գիտական գործունեության և հաշվետվողականության վերլուծությունը, մշակված չեն գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման գործիքները:

6.4 Դրական է, որ ՖԿՀՊԻ-ն դարձել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջազգային համալսարանների ասոցիացիայի անդամ: Այդ առումով 2015թ.-ին ՄՈՒՀ-ում կազմակերպել «Օլիմպիական սպորտ, սպորտ բոլորի համար» միջազգային կոնգրես, որին մասնակցել են շուրջ 12 երկրի ոլորտի ներկայացուցիչներ, առկա են տվյալներ ՊԴԿ-ի միջազգային գիտաժողովներում մասնակցության, ԱՊՀ և օտարերկրյա միջազգային գրախոսվող ամսագրերում հրատարակումների վերաբերյալ: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը, համադրելով այն ՄՈՒՀ-ի ՊԴԿ-ի քանակի հետ, համարում է, որ դրանք կրում են եզակի բնույթ, գիտական ներուժը չի տպագրվում համաշխարհային ցիտվող ամսագրերում (Սկոպուս, Վեբ օֆ Սայնս, Ռինց և այլն), չունեն համատեղ հրատարակված միջազգային հոդվածներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց նաև, որ ինչպես ուսանողները, երիտասարդ հետազոտողներն, այնպես էլ դասախոսական կազմը դեռևս չի մասնակցում միջազգային հետազոտական փոխանակման ծրագրերի, այն դեպքում, երբ վերջիններս կնպաստեն

հետազոտությունների ֆինանսավորման միջազգային աղբյուրների հասանելիությանը: Փոխարենը, կարելի է փաստել, որ հետազոտությունների գերակշիռ մասը 2011-2015թթ.-ի ընկած ժամանակահատվածում հրատարակված են ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրում (Գիտամեթոդական նյութերի ժողովածու), որտեղ 2015թ.-ի հրատարակումները համեմատած 2011թ.-ի հետ աճել են 27%-ով: Փորձագիտական խումբը կարծում է, որ միջազգային մակարդակով հետազոտության արդյունքների ճանաչման միտումով ՖԿՀՊԻ-ն առաջին քայլերն է կատարում, և դեռևս պետք է մշակվի ճանապարհային քարտեզ (իրականացնել պլանավորում) հետազոտության միջազգայնացման համար:

6.5 ՖԿՀՊԻ-ում գիտահետազոտական գործունեության և կրթական գործընթացների փոխկապակցման մեխանիզմ է համարվում ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, ՊԴԿ-ի կողմից մշակված և արտոնագրված սարքերի կիրառումն ուսումնական գործընթացում, հետազոտական արդյունքների ներդրումը դասախոսություններում, լաբորատոր աշխատանքներում և ուսումնամեթոդական ձեռնարկներում, ինչը նախապես քննարկվում է ամբիոնի նիստերում: ՖԿՀՊԻ-ում հաստատվել է ուսումնամեթոդական խորհրդի կանոնադրություն, ուր ամրագրված են խորհրդին առընթեր հանձնաժողովների իրավասություններն՝ ուղղված ՄՈՒՀ-ում կատարվող ուսումնամեթոդական աշխատանքներին:

Ուսանողների ներգրավվածությունը ՄՈՒՀ-ի հետազոտական աշխատանքներում արտացոլվում է ուսանողական գիտական խմբակներում կատարած աշխատանքներում, որոնք ամփոփվում են ուսանողական գիտական կոնֆերանսներում:

Ընդհանուր առմամբ նշված մեխանիզմները բոլորն էլ դրական են, սակայն հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը վերլուծության տվյալները բացակայում են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՖԿՀՊԻ-ն ամրագրել է հետազոտական ոլորտում ռազմավարական նպատակներ, որդեգրել գերակա ուղղություններ և, ինչպես պարզ դարձավ այցի ընթացքում, իրականացնում հետազոտություններ ոչ միայն ՄՈՒՀ-ի, այլ նաև ՀՀ օլիմպիական և սպորտի կոմիտեների հետաքրքրությունների շրջանակում՝ դրանով իսկ վկայելով ոլորտում գիտահետազոտական կենտրոն դառնալու հավակնությունը: Ուշագրավ է, որ ՖԿՀՊԻ-ում ռազմավարական հետաքրքրությունների և հավակնությունների իրականացման համար գործում են գիտահետազոտական կենտրոն և գիտատեղեկատվական բաժին, սակայն ռեսուրսների օպտիմալ բաշխման տեսանկյունից փորձագիտական խումբը նպատակահարմար չի գտնում համանման գործառույթներով երկու բաժնի առկայությունը: Հետազոտական ոլորտում ինստիտուտի հետաքրքրություններն արտահայտող ռազմավարության արդյունավետության վերլուծության բացակայությունը, կարող է հանգեցնել ոլորտում առկա խնդիրների ոչ լիարժեք վերհանմանը:

Այն փաստը, որ ՖԿՀՊԻ-ն սահմանել է երկարաժամկետ հետազոտական աշխատանքների գերակա ուղղություններ, ներկայացնում է կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի իրագործման կատարողականի ցուցիչներ, փորձագիտական խմբին թույլ է տալիս եզրակացնել, որ ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և հետաքրքրություններն արտահայտող կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրեր: Այնուամենայնիվ, հաշվետվություններում ըստ ժամանակացույցի ծրագրերի հստակ պլանավորման և իրականացման վերլուծության ոչ լիարժեք արտացոլումը որոշակիորեն կարող է նվազեցնել աշխատանքների կազմակերպման վերահսկողությունը և արդյունավետության գնահատումը:

Հատկանշական է, որ ՖԿՀՊԻ-ն հետազոտությունների իրականացման և զարգացման նպատակով մշակել է մի շարք ընթացակարգեր, կանոնակարգեր, գիտահետազոտական գործունեությանը վերաբերող մեթոդական ցուցումներ, առկա են հետազոտության զարգացման որոշակի ցուցիչներ, օժանդակում է ուսանողների և դասախոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներում: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը համարում է,

որ մեխանիզմների արդյունավետության մշտադիտարման բացակայությունը կհանգեցնի բարելավմանն ուղղված գործողությունների դանդաղեցմանը:

Թեև ՖԿՀՊԻ–ն փորձում է որոշակի քայլեր կատարել ուղղված ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացմանը՝ անդամագրվել է Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջազգային համալսարանների ասոցիացիային, կազմակերպել միջազգային կոնգրես, այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարծում է, որ միջազգային հետազոտական փոխանակման ծրագրերի բացակայությունը խոչընդոտում է ուսանողների և դասախոսների շարժունությանը: Ըստ էության չեն իրականացվում միջազգային համատեղ հետազոտություններ: Սեփական հետազոտությունների արդյունքների միաջազգայնացումը ևս ցածր մակարդակի վրա է, ինչի մասին վկայում են օտարերկրյա գրախոսվող պարբերականներում եզակի թվով հրատարակումները, ուստի միջազգային հետազոտական համագործակցությունը հաստատությունում դեռևս թույլ հիմքերի վրա է և մարտահրավեր է բուհի համար:

Ուշագրավ է, որ ՖԿՀՊԻ-ում գործում են մեխանիզմներ՝ նպատակաուղղված կրթական և հետազոտական գործընթացների փոխկապակցմանը, սակայն փորձագիտական խումբը կարծում է, որ մեխանիզմների արդյունավետության վերլուծության բացակայությունը կարող է խոչընդոտել կրթություն-գիտություն փոխկապակցման հիմնախնդիրների վերհանմանը և հետագա բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն փաստը, որ ՖԿՀՊԻ-ում առկա են ոլորտին առանձնահատուկ հետազոտական գերակա հետաքրքրություններ և ուղղություններ, իրականացնում են հետազոտություններ ոչ միայն ՄՈՒՀ-ի, այլ նաև ՀՀ օլիմպիական և սպորտի կոմիտեների հետաքրքրությունների շրջանակում, ինստիտուտը սահմանել է երկարաժամկետ ռազմավարություն և իրականացնում է կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրեր, ուր ներգրավում է մեծ քանակով ուսանողներ և դասախոսներ, մշակել է հետազոտությունների իրականացման ընթացակարգեր, կրթական և հետազոտական փոխկապակցման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունը իրականացնում է հետազոտական գործունեություն և ապահովում դրա կապը ուսումնառության հետ:

Եզրակացություն: ՖԿՀՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՖԿՀՊԻ-ն 2011-2015թթ. ՌԾ-ում ինստիտուտի բարելավման և զարգացման համար որդեգրել է նպատակ՝ բարձրացնել նյութատեխնիկական բազան, վերազինել ժամանակակից սարքավորումներով: ՄՈՒՀ-ը հրատապ է համարում նաև առկա լսարանային ֆոնդի ընդլայնումն ու տեխնիկական հանդերձավորումը:

Այսօր ՄՈՒՀ-ը կրթական գործընթացի իրականացման համար ունի ուսումնական միջավայր, որը ներառում է երեք մասնաշենք, սպորտդահլիճ, մարզախաղերի համար նախատեսված մանեժ, տասնմեկ մարզադահլիճ և մեկ բացօթյա խաղահրապարակ, լաբորատորիաներ, ամբուլատորիա, պաշտոնական ինտերնետային կայք, վարձակալության հիմունքներով՝ լողավազան, թենիսի կորտ և այլն: ՄՈՒՀ-ի տարածքում առկա են անվճար WiFi գոտիներ, ինտերնետային կապով ապահովված ընթերցասրահ և համակարգչային լսարան: Գրադարանային ծառայությունների մատուցման համար ինստիտուտն ունի 2 գրապահոց: Որոշ լսարաններում ևս առկա են փոքր գրադարաններ՝ կազմված մասնագիտական գրականությունից: Ընթացքի մեջ են էլեկտրոնային քարտադարանի ստեղծման աշխատանքները: Վերջին 3 տարիներին գրադարանային ֆոնդի համալրման համար

կատարվել են զգալի ֆինանսական հատկացումներ: Գրադարանը համալրվել է 9 անուն մարզական ամսագրով: Ստեղծվել է էլեկտրոնային գրադարան, որը, սակայն, համալրման կարիք ունի և դեռևս լայն կիրառություն չի գտել ուսանողների շրջանում:

Ինքնավերլուծության զեկույցում ևս նշվում է, որ ՄՈՒՀ-ի լսարանային և լաբորատոր մակերեսների ապահովվածությունը դեռևս ցածր է ՀՀ սահմանված նորմատիվներից. 1 ուսանողի համար պահանջվող լսարանային ֆոնդի մակերեսի դեֆիցիտը կազմում է մոտավորապես 55%, լաբորատոր մակերեսի դեֆիցիտը՝ 95%:

Չնայած դրան՝ փորձագիտական խումբն այցի ընթացքում համոզվեց, որ ընթացքի մեջ են կրթական միջավայրի ընդլայնման, ենթակառուցվածքների բարեկարգման և վերանորոգման աշխատանքները, սակայն առայժմ շենքային տարածքների զգալի մասն արդիականացման անհրաժեշտություն ունի, ոչ բոլոր ՄԿԾ-ներն են ապահովված անհրաժեշտ ռեսուրսներով. որոշ գիտահետազոտական, ամբուլատոր կենտրոններում և լաբորատորիաներում սարքավորումներն ու նյութերը թարմացման կարիք ունեն, համակարգչային լսարանների, ինչպես նաև ինտերակտիվ ուսուցման համար նախատեսված լսարանները սակավաթիվ են:

7.2 ՄՈՒՀ-ը սահմանել է ֆինանսների տնօրինման քաղաքականություն և հաշվապահական հաշվառումը վարվում է համապատասխան հաշվապահական հաշվառման ստանդարտների, հարկային օրենսդրության և այլ նորմատիվ իրավական ակտերի: Ֆինանսական կառավարումն իրականացնում է ռեկտորը՝ ՖԿՀՊԻ կանոնադրությամբ նրան տրված իրավասությունների սահմաններում:

ՖԿՀՊԻ-ի ֆինանսավորումը կատարվում է 2 ճանապարհով՝ բյուջետային և արտաբյուջետային: Վերջինս կազմվում է ուսանողների վարձավճարներից և դրամաշնորհներից: ՄՈՒՀ-ը փաստում է, որ պետբյուջեից ֆինանսավորման համար նախատեսված նորմատիվային ծախսերի մեծությունները հիմնականում զիջում են մեկ ուսանողի հաշվով միջին ծախսերի արժեքին՝ հաշվի առնելով նաև աճող գնային համակարգը:

2011-2015թթ.-ին բյուջետային ֆինանսավորումը նվազել է 20%-ով, իսկ արտաբյուջետայինը՝ աճել 12%-ով: Բյուջեի ծախսերի 70% և ավելի կազմում են աշխատավարձերը, իսկ մնացած մասը հատկացված է նորոգման, կահավորանքի, սպորտային գույքի, համակարգչային տեխնիկայի ձեռքբերմանը:

ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսների կառավարումն իրականացվում է տարեկան կտրվածքով: Համապատասխան ռեսուրսներ տրամադրվում են, սակայն, բացակայում է բյուջեի բաշխման արդյունավետության վերլուծությունը ըստ ՌԾ նպատակների և խնդիրների:

Կարելի է արձանագրել, որ ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսները սահմանափակ են և չեն բավարարում ՌԾ-ով որդեգրած խնդիրների լիովին իրագործմանը. այս խնդիրը մասնակիորեն կարգավորվում է բարերարների միջոցով:

Դրական առումով հարկ է նշել, որ ֆինանսական միջոցների արտահայտված սղության պայմաններում, ՄՈՒՀ-ը կայուն փոքր ներդրումների ճանապարհով փորձում է քայլ առ քայլ վերազինել նյութատեխնիկական բազան:

7.3 ՄՈՒՀ-ում զուտ կրթական ծրագրերի մակարդակում ֆինանսական պլանավորում չի իրականացվում, այդուհանդերձ, ֆինանսական միջոցների հատկացման հիմքում դրված է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային պահանջը: Տարեկան պլանավորման համար հիմք են հանդիսանում կրթական ծրագրերի իրականացման գործում ընդգրկված ստորաբաժանումների կողմից պահանջված և որպես առաջնայնություն ներկայացնող ռեսուրսների ցանկը: Ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում՝ բյուջեի ձևավորման կարգը, ֆինանսների բաշխումը, ծախսերի մշտադիտարկումը և իրականացման հաշվետվությունն իրականացվում են ըստ բուհի գործունեության ոլորտների, որը նպաստում է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացմանն ու շարունակականությանը: Ֆինանսական քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է գիտական և կառավարման խորհուրդներում ռեկտորի հաշվետվության քննարկման միջոցով:

Ինքնավերլուծության զեկույցում նշվում է, որ ՄՈՒՀ-ը ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ չի իրականցրել, այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինստիտուտը նախատեսում է իրականացնել այն:

7.4 Կարևորելով կրթական և հետազոտական աշխատանքների որակի բարձրացման պահանջը՝ ՖԿՀՊԻ-ն աշխատանքներ է տանում նյութատեխնիկական բազայի նորացման և զարգացման ուղղությամբ: Վերջին հինգ տարվա ընթացքում ՄՈՒՀ-ն ավելացրել է նյութատեխնիկական և աշխատանքային ռեսուրսների ծախսերը մոտ 10%-ով:

Դրամաշնորհային ծրագրերը հնարավորություն են ընձեռել ՖԿՀՊԻ-ն որոշակիորեն համալրել ինստիտուտի ռեսուրսները՝ գնել համակարգիչներ, լսարանային գույք և այլն, այնուամենայնիվ, անբավարար ֆինանսական ռեսուրսների հետևանքով ՌԾ-ով նախատեսված գործառույթների գերեկա մասը (լաբորատոր սարքավորումների նորացում, մարզադաշտերի, լողավազանի, ուսումնամարզական բազաների ստեղծում) ինստիտուտին չի հաջողվել իրականացնել, ուստի դրանք տեղափոխվել են 2016-2020թթ.-ի ՌԾ: Նյութատեխնիկական բազայի վերազինման տեմպերը ցածր են:

Փորձագիտական խմբի կողմից իրականացված ռեսուրսների դիտարկումը և ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայում ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերը, սակայն հնամաշ լինելու պատճառով, այն չի կարող նպաստել որակի շարունակական բարելավմանը՝ ռիսկեր ստեղծելով ապագայի համար:

7.5 ՖԿՊՀԻ-ում տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացները կարգավորվում են ինստիտուտի ներքին կարգապահական կանոններով:

Ինստիտուտում գործում է տեղեկատվության հաղորդման 2 եղանակ՝ վերից վար (վարչական օղակներից դեպի ամբիոններ՝ հրամանների և որոշումների միջոցով) և վարից վեր (ստորաբաժանումներից ռեկտոր՝ հաշվետվողականության մեխանիզմով):

ՄՈՒՀ-ը ստեղծել է փաստաթղթաշրջանառության ներինստիտուտային համակարգչային ծրագիր, սակայն այն ամբողջապես չի կիրառվում:

Հարկ է նշել, որ այցի ընթացքում փաստաթղթավարման գործընթացում հայտնաբերվել են որոշ թերացումներ, ներինստիտուտային ցանցի տվյալների բազայի անվտանգության համակարգը կատարելագործման կարիք ունի: Էապես զգացվում է SS տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտություն:

7.6 ՖԿՀՊԻ-ն ապահովում է ուսանողների և աշխատակիցների առողջապահական միջավայրը և առողջապահական ծառայություններ է մատուցում ամբուլատորիայի միջոցով, որն իրականացնում է նաև ներբուհական ընդունելության քննությունների բժշկական սպասարկումը:

Ամբուլատորիան ունի իր կանոնադրությունը և ֆինանսավորվում է ինստիտուտի բյուջեից, ծավալում է կենտրոնացված և ապակենտրոնացված գործունեություն (օր.՝ մարզական պարապմունքների անցկացման համար ՄՈՒՀ-ում սահմանված են բուժանձնակազմի հերթապահություններ): Ամբուլատորիայում աշխատում է 4 բժիշկ և 5 բուժքույր, աշխատանքները ղեկավարում է գլխավոր բժիշկը: Անհրաժեշտության դեպքում բուժանձնակազմը կազմակերպում է նաև տուժածի տեղափոխումը հիվանդանոց: Կարելի է արձանագրել, որ ամբուլատորիան իրականացնում է իր գործառույթները և ունի բավարար միջոցներ բժշկական ծառայությունների մատուցման համար:

ՄՈՒՀ-ի սանիտարահիգիենիկ վիճակը կարելի է գնահատել բավարար:

Անձնակազմի անվտանգության ապահովման նպատակով ինստիտուտում փակցված են տարհանման սխեմաներ, բոլոր մասնաշենքերում գործում է պահնորդական ծառայություն:

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ ներկայում ՄՈՒՀ-ում չեն սովորում: Ղեկավարության հետ հանդիպումների ժամանակ նշվեց, որ ինստիտուտի ենթակառուցվածքային ռեսուրսներն առայժմ հարմարեցված չեն առանձնահատուկ կարիքներ

ունեցող անձանց կարիքներին: Սակայն, կարևորելով ներառական կրթությունը և այն, որ ՄՈՒՀ-ում ներդրվել է ադապտիվ ֆիզկուլտուրա մասնագիտությունը, ՄՈՒՀ-ը նախատեսում է այս ուղղությամբ քայլեր ձեռնարկել:

7.7 ՖԿՀՊԻ-ն ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների արդյունավետությունը, կիրառելիությունը և հասանելիությունը գնահատող մշակված ընթացակարգեր և ժամանակացույց չունի: Գնահատման գործիք են ծառայում ուսանողների, դասախոսների և շրջանավարտների սոցիոլոգիական հարցումները, սակայն գործիքների մի մասը նոր է անցել փորձաշրջանը և դեռևս լայն կիրառության մեջ չի մտել: Պլանավորվում է դրանք շրջանառության մեջ մտցնել 2015-2016 ուսումնական տարվանից:

Դատողություններ: Չնայած առաքելության և նպատակների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների սղությանը՝ ՄՈՒՀ-ը կայուն ներդրումների ապահովման ճանապարհով աշխատանքներ է տանում ընդլայնելու լսարանային և լաբորատոր ֆոնդի մակերեսներն, ավելացնելու մարզադահլիճների և գիտահետազոտական լաբորատորիայի հագեցվածությունը, բարելավելու լսարանային պայմանները, վերազինելու գրադարանային ֆոնդը: Այդ ուղղությամբ վերջին տարիներին կատարված աշխատանքները զգալի են, այդուհանդերձ, նյութատեխնիկական բազայի դանդաղ վերազինումը խոչընդոտում է կրթական պրոցեսի և հետազոտական գործունեության արդիականացմանը և միջազգայնացմանը:

Դրամաշնորհային քաղաքանության և բարերարների ներդրումների շնորհիվ ինստիտուտին հաջողվել է որոշ չափով ավելացնել արտաբյուջետային ֆինանսավորումը: Ֆինանսական գործունեության կայունության ապահովման նպատակով՝ ինստիտուտը ձգտում է մի կողմից ավելացնել ֆինանսական հոսքերը և դրանց աղբյուրները դարձնել ավելի բազմազան, մյուս կողմից՝ վարել ռեսուրսախնայողական քաղաքականություն: Վերջինիս ապահովումն անշուշտ կխթաներ նյութատեխնիկական բազայի վերազինման դեռևս դանդաղ տեմպերը: Այդ տեսակետից կարևորվում է նաև ֆինանսատնտեսական աուդիտի անցկացումն, ինչը թույլ կտա վեր հանել ֆինանսական միջոցների բաշխման թույլ կողմերը և հաշվի առնել դրանք բյուջեի պլանավորման ժամանակ:

Փաստաթղթաշրջանառությունը և գործավարությունը ՖԿՀՊԻ-ում կանոնակարգված են, սակայն ինչպես ՄՈՒՀ-ն է փաստում, ոչ բոլոր գործընթացները և աշխատանքներն են փաստաթղթավորվում, ինչը դժվարացնում է տեղեկատվության վերլուծության գործընթացը:

ՄՈՒՀ-ում գործող ամբուլատորիան ունի նվիրված և փորձառու բժշկական անձնակազմ և ինստիտուտից ստանում է ֆինանսական միջոցներ սովորողներին ու աշխատակիցներին առողջապահական ծառայությունների մատուցման համար: Ինստիտուտը միջոցներ է ձեռնարկում նաև սանիտարահիգիենիկ պայմանների պահանջվող մակարդակը և անձնակազմի անվտանգությունն ապահովվելու համար: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին ՄՈՒՀ-ը ներկայում ծառայություններ չի մատուցում, ինչի առկայությունը կշեշտադրեր ադապիվ ֆիզկուլտուրա մասնագիտության կիրառական նշանակությունը և կնպաստեր բուհի վարկանիշի բարձրացմանը, ինչպես նաև դիմորդների ներհոսքի ավելացմանը:

Կրթական ռեսուրսների արդյունավետությունը, կիրառելիությունն ու հասանելությունը գնահատելու գործիքները, ընթացակարգերը և ժամանակացույցը մշակման և ներդրման կարիք ունեն: Դրանց բացակայությունը կարող է հանգեցնել ինստիտուտի ֆինանսական ռիսկերի կառավարման հսկողության թուլացմանը և նպատակների ոչ լիարժեք իրագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ սահմանափակ ֆինանսական միջոցների պայմաններում ՄՈՒՀ-ը ստեղծել է բավարար ուսումնական միջավայր մասնագիտական կրթության իրականացման համար, ապահովում է ուսանողների և աշխատակիցների անվտանգ միջավայրը՝ մատուցելով առողջապահական և պահնորդական ծառայություններ, ունի տեղեկատվության հաղորդման և փաստաթղթաշրջանառության կանոնակարգված համակարգ, կարելի է եզրակացնել, որ ինստիտուտն ունի անհրաժեշտ ռեսուրսներ

ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների իրականացման համար:

Եզրակացություն: ՖԿՀՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՖԿՀՊԻ-ն նպատակ ունի բարձրացնել իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների վերաբերյալ հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը:

Ինստիտուտն ունի արտաքին և ներքին հաշվետվողականության գործող համակարգ:

Ներքին հաշվետվողականության համակարգն իրականացվում է բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների և ռեկտորի տարեկան հաշվետվությունների միջոցով: Հաշվետվողականության արդյունավետության բարձրացման նպատակով ՖԿՀՊԻ-ն վերջին 3 տարիների ընթացքում գիտական խորհրդի քննարկմանը ներկայացվող ռեկտորի հաշվետվությունը հրատարակում և տրամադրում է կառուցվածքային ստորաբաժանումներին:

Արտաքին հաշվետվողականությունն ապահովվում է ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվությունը պաշտոնական կայքում տեղադրելու միջոցով, որտեղ հրապարակվում է նաև ռեկտորի տարեկան հաշվետվության սեղմ տարբերակը: Արտաքին հաշվետվողականության մեխանիզմներից է ՀՀ ԿԳՆ-ին ներկայացվող հաշվետվությունը ևս:

8.2 ՖԿՀՊԻ-ն որակի ապահովման գործընթացների հիմնական նպատակներից է համարում հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ապահովումը, ինչի իրականացման նպատակով ՄՈՒՀ-ն իր գործընթացներին վերաբերող տեղեկատվությունը և հաշվետվությունները տեղադրում է իր պաշտոնական կայքէջում, այդուհանդերձ վերջինս ունի համալրման կարիք:

ՖԿՀՊԻ-ն հետևում է իր համացանցային ռեսուրսների հաճախումների վիճակագրությանը և դրական է, որ կայքի այցելուների թվաքանակը վերջին տարիների դինամիկայում աճի միտումներ է դրսևորում: Կայքը հնարավորություն է տալիս հետադարձ կապի մեխանիզմներով կապ հաստատել ստորաբաժանումների հետ: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ նաև անմիջապես դիմելով համապատասխան ստորաբաժանումներին:

ՄՈՒՀ-ը լուսաբանում է գործընթացները և տարածում տեղեկատվությունը նաև «Հայ Արի» և «Մարզաշխարհ» թերթերի միջոցով:

8.3 Չնայած հասարակության հետ հետադարձ կապի հաստատված քաղաքականություն և ընթացակարգերի բացակայությանը՝ ՄՈՒՀ-ը գործունեության տարբեր ոլորտներում հետադարձ կապն իրականացնում է մի շարք եղանակներով, մասնավորապես՝ կրթական ոլորտին առնչվող հարցերի դեպքում՝ էլեկտրոնային և գրավոր նամակներ ստորաբաժանումների ղեկավարներին, պարբերական հանդիպումներ ռեկտորի հետ, համագործակցություն միջազգային կառույցների, ֆեդերացիաների և դպրոցների հետ: Գիտության ոլորտում, որպես հասարակության հետ կապի մեխանիզմներ, ինստիտուտն առանձնացնում է միջազգային կոնֆերանսների և միջազգային պայմանագրերի շրջանակներում ստեղծվող կապերն այլ երկրների գիտնականների հետ:

Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ը կայքի միջոցով հետադարձ կապի արդյունավետության վերլուծություն չի կատարել: Դեռևս մշակման կարիք ունեն և հաճախ ոչ ֆորմալ բնույթ են կրում շրջանավարտների և գործատուների հետ հետադարձ կապի մեխանիզմները:

8.4 ՖԿՀՊԻ-ն հասարակությանը գիտելիքի փոխանցման նպատակով կատարում է մի շարք աշխատանքներ, մասնավորապես կազմակերպում է՝

- ՀՀ և ԼՂՀ քաղծառայողների վերապատրաստման դասընթացներ,
- ասպիրանտների և հայցորդների որակավորման դասընթացներ,
- խորհրդատվական դասընթացներ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում:

Հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հասարակությանը արժեքների փոխանցման առումով ՄՈՒՀ-ն իրականացրել է նաև հետևյալ գործառույթները.

- ինստիտուտի դասախոսները և ուսանողները համատեղ աշխատանքներ են իրականացրել հաշմանդամների կազմակերպություններում, «Փյունիկ» ընկերությունում, «Զատիկ» մանկական կենտրոնում, ծերանոցում,
- մասնակցել են հանրապետության մարզիկների, ֆիզկուլտուրայի ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացներին,
- առաջատար մարզիչները համագործակցում են մանկապատանեկան մարզադպրոցների հետ, ընդգրկված են հանրապետության մրցավարական հանձնաժողովներում, սպորտային ֆեդերացիաների անդամներ են,
- մասնակցել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում կազմակերպված խորհրդատվություններին: Այս գործընթացում կարևոր դերակատարում ունի ինստիտուտին կից «ՖԻՄԱ» հասարակական կազմակերպությունը,
- ՖԿՀՊԻ-ն աշխատանքներ է տանում ավագ դպրոցների և քոլեջների աշակերտների հետ՝ մատուցելով մասնագիտական կողմնորոշմանը նպաստող խորհրդատվական ծառայություններ:

ՄՈՒՀ-ը տարածում է մասնագիտական տեղեկատվությունը տպագիր տեղեկատվական նյութերի, սեմինարների և դասընթացների կազմակերպման, մասնագետների այցելությունների միջոցով:

Ինչպես նշվում է բուհի ինքնավերլուծության զեկույցում՝ վերը նշված կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման գործիքներ ինստիտուտն առայժմ չունի:

Դատողություններ: ՖԿՀՊԻ-ում գործում է հաշվետվողականության արտաքին և ներքին՝ ներքնից վերև և վերևից ներքև համակարգերը, որտեղ կենտրոնականը ռեկտորի տարեկան հաշվետվություններն են: Դրանք իրենց մեջ ներառում են բուհի տվյալ տարվա գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հաշվետվությունները: Չնայած ղեկավարման ստորին օղակների և աշխատակազմի հաշվետվողականության մեխանիզմները հստակեցված չեն, մշակված չեն դրանց պարբերաբար ներկայացման և կանոնակարգման մեխանիզմները՝ կարելի է արձանագրել, որ ՄՈՒՀ-ում հաշվետվողականությունը տարեկան գործընթաց է և ունի պարբերական բնույթ:

Ինստիտուտը հասարակության առջև իր գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունն ու հասանելիությունն ապահովում է կայքէջի, թերթերի և իր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տրամադրվող տեղեկատվության միջոցով: Հարկ է նշել, որ կայքում տեղադրված ինֆորմացիան դեռևս ամբողջական չէ և համալրման կարիք ունի, ինչը կարող է նվազեցնել շահակիցների հետաքրքրության մակարդակը:

Հասարակության հետ կապի ձևավորման և հետադարձ կապի ապահովման նպատակով ՖԿՀՊԻ-ում գործում են մեխանիզմներ և ստորաբաժանումներ, սակայն դրանց գործունեության արդյունավետության հետ կապված վերլուծությունները և դրանից բխող բարելավման գործընթացները բացակայում են, ինչը թույլ չի տալիս դատել վերջիններիս նպատակային և արդյունավետ գործունեության մասին՝ կապված հասարակության և արտաքին շահակիցների հետ կապի ձևավորմանը:

Հասարակությանն արժեքներ փոխանցելու գործառույթի հաջող իրականացման մասին են վկայում վերը ներկայացված բազմաթիվ օրինակները՝ վերապատրաստման և խորհրդատվական դասընթացներ, օժանդակություն հասարակության սոցիալապես անապահով խավերին, համագործակցություն տարբեր կազմակերպությունների հետ և այլն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ն ունի արտաքին և ներքին հաշվետվողականության ձևավորված համակարգ, տեղեկատվության տարածման թափանցիկության ապահովման նպատակով կիրառում է համապատասխան գործիքներ (կայքէջ, թերթեր, տեղեկագրեր և այլն), հասարակությանն արժեքներ փոխանցելու նպատակով իրականացնում է լրացուցիչ կրթական, խորհրդատվական և բարեգործական ծառայություններ, ինչպես նաև՝ գործունեության տարբեր ոլորտներում հասարակության հետ հետադարձ կապի համար ունի որոշ մեխանիզմեր, կարելի է եզրակացնել, որ ինստիտուտն ապահովում է բավարար մակարդակով հաշվետվողականություն պետությանը և հասարակությանը:

Եզրակացություն: ՖԿՀՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Թեև ՖԿՀՊԻ-ն 2011-2015թթ.-ի ՌԾ-ում որդեգրել է նպատակ՝ ապահովել ինստիտուտի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանել գործունեության միջազգայնացման առկա միտումները, սահմանել խնդիր՝ բարելավել միջազգային կապերը և ինստիտուտի ներուժի օգտագործման արդյունավետությունը՝ դարձնելով այն առավել մրցունակ ուսումնամարզական և գիտաուսումնական միջազգային շուկայում, այդուհանդերձ, ինստիտուտի սահմանած առաքելությունը չի արտացոլում հաստատության միջազգայնացման ռազմավարական ուղղությունը: Փորձագիտական խումբը կարծում, որ միջազգայնացմանն ուղղված միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ը առաջին քայլերն է կատարում՝ համալրելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջազգային ասոցիացիայի շարքերը, իսկ քաղաքականությունը դեռևս միտված է սփյուռքահայ ուսանողներին ներգրավելու, որոնց թիվը այնքան էլ մեծ չէ:

Բոլոնյան գործընթացին ինտեգրվելու տեսանկյունից կարևոր է ունենալ միջազգային կրթական և հետազոտական փոխանակման ծրագրեր, ապահովել ուսանողների և դասախոսների արտագնա և ներգնա շարժունություն: Այնուամենայնիվ նշյալ գործընթացներն, ինչպես նաև կրթական ծրագրերի միջազգայնացումը և լավագույն փորձի ներդրումը դեռևս պլանավորման փուլում են, բացակայում է միջազգային բենչմարքինգը հաստատող վերլուծությունը: Դեռևս բավարար հիմքեր չեն ստեղծվել միջազգային ոլորտում ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը գնահատող չափելի ցուցիչների մշակման, ինչպես նաև ազգային մակարդակում արտաքին կապերի զարգացման համար:

Փորձագիտական խումբը համարում է, որ փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու առումով ՄՈՒՀ-ում դեռևս համակարգված մոտեցում և քաղաքականություն չկա, այն սահմանափակվում է ռազմավարական նպատակների և դրանցից բխող խնդիրների միջոցով, միջազգային կապերի կենտրոնի գործունեության կանոնակարգով, ուստի այս տիրույթում ՖԿՀՊԻ-ն ունի դեռևս բազմաթիվ անելիքներ:

9.2 ՖԿՀՊԻ-ում արտաքին կապերի զարգացման և ընդլայնման միտումով ձևավորվել է միջազգային կապերի բաժինն իր կանոնադրությամբ, որի հիմնական նպատակն է՝

օտարերկրյա ուսանողների և ասպիրանտների ուսումնագիտական արդյունավետ գործընթացի կազմակերպումը: Այս առումով փորձագիտական խումբը կարծում է, որ առկա է անհամապատասխանություն ՌԾ-ի և ստորաբաժանման կանոնադրության սահմանած նպատակների միջև, բաժնի ողջ գործունեությունը կարծես թե միտված է միայն սփյուռքահայ ուսանողների ընդունելությանը, նրանց ուսումնամարզական գործընթացների կազմակերպմանը: Թեև ենթակառուցվածքն իր գործունեությունն իրականացնում է՝ առաջնորդվելով գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներով, այդուհանդերձ, վերջիններս այնքան էլ չեն համապատասխանում ՖԿՀՊԻ-ի միջազգային կապերի բաժնի կանոնադրական դրույթներին: Միջազգային բաժնի գործունեությունն ամփոփում է տարեկան հաշվետվությունների տեսքով, սակայն վերջիններս բավականին մակերեսային են, չի ներկայացվում միջազգայնացմանն ուղղված կարիքների վերհանում, գործընթացների պլանավորում և վերլուծություն: Թեև ՖԿՀՊԻ-ն կնքել է մի շարք համագործակցության պայմանագրեր, սակայն դրանք բովանդակային առումով համանման են, հաշվի չեն առնված տարբեր հաստատությունների առանձնահատկությունները, չկան համագործակցության շոշափելի ձեռքբերումներ և արդյունավետության վերլուծություններ:

Փորձագիտական խումբը համարում է, որ ենթակառուցվածքի առկայությունը դեռևս չի երաշխավորում միջազգայնացման արդյունավետ և, առավելապես, կանոնակարգված գործընթաց, քանի դեռ ՄՈՒՀ-ում չեն գործում դասախոսների և ուսանողների շարժունությանը նպաստող փոխանակման կրթական և հետազոտական ծրագրեր, չի ապահովվում օտարերկրյա ուսանողների ներհոսքը, և պարզ չէ, թե այս ոլորտում ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը որքանով է նպաստում ռազմավարական նպատակների իրագործմանը:

9.3 ՖԿՀՊԻ-ն ուսումնական գործընթացի՝ գործնական դասընթացների, մանկավարժական, մասնագիտական և կլինիկական պրակտիկաների իրականացման նպատակով կնքել է բազմաթիվ պայմանագրեր և համագործակցում է տեղական հաստատությունների և կառույցների հետ (մարզա- և հանրակրթական դպրոցներ, մարզական ընկերություններ և ակումբներ, հեռուստաընկերություն, խմբագրություններ, մանկական վերականգնողական կենտրոն, ՀՀ ՓԾ հատուկ փրկարարական ջոկատ):

Ուշագրավ է, որ ինստիտուտը կնքել է մեծ թվով համագործակցության պայմանագրեր միջազգային կրթական հաստատությունների հետ, որոնք ներառում են կրթության, գիտության, սպորտի զարգացման ոլորտները, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարծում է, որ արդյունավետ համագործակցության օրինակները դեռևս եզակի են: Փորձագիտական խումբը, հաշվի առնելով նաև վերը նշված չափորոշիչներում բերված փաստարկները, կարծում է, որ դեռևս վաղ է փաստել ՄՈՒՀ-ի և միջազգային կառույցների, հաստատությունների միջև արդյունավետ համագործակցության մասին:

9.4 Թեև ՖԿՀՊԻ-ում միջազգային կապերի բաժնին կից գործում են լեզվի ուսուցման դասընթացներ (անգլերեն, ռուսերեն)՝ միտված ներքին շահակիցների (դասախոսների, երիտասարդ հետազոտողների, ուսանողների) լեզվական հմտությունների զարգացմանը, իսկ բուհի ներկայացրած ինքնավերլուծության զեկույցում ամրագրված են 2011-2015թթ. ժամանակահատվածն արտացոլող բավական բարձր ցուցանիշներ՝ օտար լեզուներին տիրապետող շահակիցների վերաբերյալ, այդուհանդերձ, անհնար է փաստել դասընթացների արդյունավետությունը, քանի որ այցի ընթացքում ակնհայտ էր, որ ՄՈՒՀ-ում օտար լեզվի իմացությունը բավականին ցածր մակարդակի վրա է, ինչի մասին վկայում էին թե ուսանողները, թե դասախոսները և թե շրջանավարտներն ու գործատուները:

Թեև փորձագիտական խումբը ծանոթացավ դասախոսների անգլերենի վերապատրաստման թեստավորման արդյունքներին, այնուամենայնիվ, թեստերը բավականին պարզունակ են, ուստի չեն կարող ապահովել և, առավելապես, նպաստել արտագնա շարժունությանը, կրթական և գիտահետազոտական միջազգային ծրագրերի իրականացմանը, միջազգային ամսագրերում տպագրմանը: Փորձագիտական խումբը կարծում է, որ ՄՈՒՀ-ը դեռևս չի ապահովում ներքին շահակիցների օտար լեզվի իմացության

անհրաժեշտ մակարդակն, ինչը լուրջ խոչընդոտ է հաստատության միջազգայնացման զարգացման տեսանկյունից:

Դատողություններ: Հատկանշական է, որ ՖԿՀՊԻ-ն միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու առումով սահմանել է ռազմավարական նպատակ և դրա իրագործման համար ձևավորել համապատասխան բաժին իր կանոնադրությամբ, սակայն համադրելով ՌԾ-ում և բաժնի կանոնադրությունում ամրագրված նպատակները, փորձագիտական խումբը համարում է, որ վերջինս մասնակի է արտացոլում ՌԾ-ով սահմանված նպատակի իրագործումը: Բաժնի գործունեությունը հիմնականում սահմանափակվում է սփյուռքահայ ուսանողների և ասպիրանտների ընդունելությամբ և ուսումնագիտական գործընթացը կազմակերպելով, ինչը հանգեցնում է միջազգայնացման ռազմավարության ոչ ամբողջական և կանոնակարգված քաղաքականությանը: Խումբը համարում է, որ ՄՈՒՀ-ը պետք է հստակեցնի որդեգրած միջազգայնացման քաղաքականության առաջնահերթությունները՝ արդյոք այն ունի ավելի լայն՝ միջազգային շրջանակ, թե ինչպես սահմանված է առաքելությունում հավակնում է դառնալ տարածաշրջանային դերակատարություն ունեցող հաստատություն: Փորձագիտական խումբը կարծում է, որ միջազգային կապերի բաժինը թերի է իրականացնում միջազգայնացմանը միտված ՄՈՒՀ-ի կարիքների վերհանումը, հաշվետվությունները մակերեսային են՝ լիովին չեն արտացոլում իրականացված գործառույթները, պարզ չէ, թե կնքված պայմանագրերի և համագործակցության շրջանակներում որ դրույթներն են իրականացվել, որոնք՝ ոչ, կամ տեղափոխվել հաջորդ տարի, և, վերջապես, միջազգային ոլորտում ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետության վերլուծության և գնահատող չափելի ցուցիչների բացակայությունը կրկին բավարար հիմքեր չի ընձեռում փորձագիտական խումբին եզրակացնելու, որ ՄՈՒՀ-ում առկա է միջազգայնացմանը նպաստող համակարգված քաղաքականություն:

Ուշագրավ է, որ ՄՈՒՀ-ը միջազգայնացմանը ուղղված քայլեր է ձեռնարկում՝ միջազգային ասոցիացիային անդամակցություն, միջազգային կոնգրեսի կազմակերպում, համագործակցության շրջանակում (Լյովենի, Թուրքմենիստանի, ԱՄՆ-ի համալսարաններ) որոշակի գործառույթների իրականացում, այդուհանդերձ, փորձագիտական խումբը համարում է, որ առանց միջազգային կրթական և հետազոտական փոխանակման ծրագրերի, ուսանողների և դասախոսական անձնակազմի արտագնա (առկա են միայն եզակի օրինակներ, այն էլ սեփական նախաձեռնությամբ) և ներգնա շարժունության, կրթական ծրագրերի լավագույն փորձի ներդրման և միջազգային բենչմարքինգը հաստատող վերլուծության, համատեղ գիտական աշխատությունների, հնարավոր չէ դատել, որ ՄՈՒՀ-ում գործում է փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր, իսկ միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը՝ երաշխավորում կանոնակարգված գործընթաց:

Դրական է, որ ՖԿՀՊԻ-ն ուսումնական գործընթացի իրականացման նպատակով համագործակցում է տեղական կառույցների և հաստատությունների հետ, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարծում է, որ գործատուների կողմից բարձրացրած հիմնախնդիրների լուծումը կնպաստի համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

Սակայն նույնը չի կարելի փաստել միջազգային պայմանագրերի առումով: ՄՈՒՀ-ը կնքել է միջազգային համագործակցության բազում համաձայնագրեր, այդուհանդերձ, բերված փաստարկները եզակի են, բավարար հիմքեր չեն ապահովում դատելու միջազգայնացմանը միտված ռազմավարական նպատակների լիակատար իրականացման և միջազգային հաստատությունների հետ արդյունավետ համագործակցության մասին:

Թեև ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ն ընձեռում է հնարավորություններ ներքին շահակիցներին՝ բարելավելու օտար լեզուների իրենց իմացությունն, այդուհանդերձ, դասընթացների արդյունավետությունը տեսանելի չէ, քանի դեռ դրանք էական ազդեցություն չեն ունեցել խնդրի լուծման համար: Փորձագիտական խումբն առավել մտահոգիչ է համարում անգլերեն լեզվի տիրապետման ցածր մակարդակը, ինչը խոչընդոտ է միջազգային

կառույցների հետ հաղորդակցության և շարժունության տեսանկյունից, ինչպես նաև լայն իմաստով սահմանափակում է միջազգային համագործակցությունների ընդլայնմանը: Խնդրի առկայության մասին բարձրաձայնեցին թե ներքին՝ ուսանողներ, դասախոսներ և թե արտաքին շահակիցները՝ շրջանավարտներ, գործատուներ: Ուստի, փորձագիտական խումբը կարծում է, որ այս տիրույթում ՄՈՒՀ-ը լուրջ քայլեր պետք է ձեռնարկի՝ ուղղված լեզվական գիտելիքների և հմտությունների մակարդակի բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն փաստը, որ ՖԿՀՊԻ-ն դեռևս չունի արտաքին կապերի հաստատմանը նպաստող համակարգված քաղաքականություն, միջազգային կրթական և հետազոտական փոխանակման ծրագրեր, դասախոսների և ուսանողների շարժունություն, կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգի լավագույն փորձի ներդրում, եզակի է միջազգային կառույցների հետ համագործակցության տեսանելի արդյունավետությունը, իսկ անգլերեն լեզվի իմացությունը դեռևս լուրջ խոչընդոտ է միջազգայնացման գործընթացների զարգացմանը, կարելի է եզրակացնել, որ ՄՈՒՀ-ը արտաքին կապերի միջոցով դեռևս բավարար չի խրախուսում փորձի փոխանակումը և զարգացումը, չի նպաստում հաստատության միջազգայնացմանը:

Եզրակացություն: ՖԿՀՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՖԿՀՊԻ-ում որակի ներքին ապահովման համակարգը ներդրվել է 2012թ.-ին: Կրթական համակարգի որակի ապահովման կենտրոնի կողմից որակի ապահովման գործընթացները կանոնակարգելու նպատակով մշակվել են մի շարք հայեցակարգային փաստաթղթեր (ՈՆԱ քաղաքականություն, ՈՆԱ հայեցակարգ, ընթացակարգեր և այլն): Վերջիններս ուղղված են ինստիտուտի առաքելության և նպատակների իրագործմանը և ինստիտուտի ներգարվմանը միջազգային կրթական տարածք:

ՖԿՀՊԻ-ն սահմանած որակի ապահովման քաղաքականության հիմնական նպատակներից են մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացումը, կրթական վերջնարդյունքների համապատասխանեցումը շահակիցների պահանջներին, որակի ամբողջական կառավարման կատարելագործումը: Ինստիտուտի որակի կառավարման և վերահսկման կազմակերպման կառուցվածքը փոփոխության է ենթարկվել 2013 թվականին, 2014թ.-ին «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակվել և հրատարակվել է Որակի ներքին ապահովման համակարգի ուղեցույց:

ՖԿՀՊԻ-ն որակի կառավարումը դիտարկում է անվերջ կատարելագործվող գործընթաց և ուշադրությունը կենտրոնացնում է ոչ թե քաղաքականության մեկ ուղղության, այլ՝ բոլոր ուղղությունների համաչափ և համակողմանի զարգացմանը: Որակի ապահովման մի շարք էական մեխանիզմներ և գործընթացներ մշակվել են վերջերս: Ներկայում առկա են մի շարք մեխանիզմներ՝ դասավանդման, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, կրթական ծրագրերի որակի գնահատման համար: Սակայն կարելի է փաստել, որ ներկայացված մեխանիզմներն, ինչպես նաև Որակի ապահովման ուղեցույցում ամրագրված մոտեցումները դեռևս պլանավորման և մասամբ իրականացման փուլում են և լիարժեքորեն չեն ներդրվել և գնահատվել:

ՖԿՀՊԻ-ում որպես ՈԱ հիմնական մեխանիզմ դիտարկվում են հարցումները, որոնք պարբերական և համակարգված բնույթ չեն կրում և դրանց արդյունավետությունը դեռևս գնահատված չէ:

10.2 ՖԿՀՊԻ-ում որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրում է մարդկային, նյութական և որոշակի ֆինանսական ռեսուրսներ: Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման գործառույթներն իրականացնող հիմնական ստորաբաժանմանը հատկացված է աշխատասենյակ, որը համալրվել է անհրաժեշտ գույքով և նյութատեխնիկական ռեսուրսներով «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Աշխատանքային գործունեության կազմակերպման համար ՄՈՒՀ-ը որակի ապահովման գործընթացներին տրամադրում է ֆինանսական հատկացումներ իր բյուջեից: ՖԿՀՊԻ ֆինանսական միջոցների 1%-ը բաժին է ընկնում որակի ապահովման բաժնին, որի գրեթե 50%-ից ավելին կազմում է աշխատողների աշխատավարձը: Որակի ապահովման բաժինն ունի հինգ աշխատող՝ բաժնի վարիչ, բաժնի տեսուչ, բաժնի օպերատոր, բաժնի թարգմանիչ, համակարգչային ծրագրավորող: Ձևավորվել են ֆակուլտետների և ամբիոնների որակի ապահովման հանձնաժողովներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՈԱ բաժնի աշխատակիցների հավաքագրման գործընթացում մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ չկան, աշխատակիցների աշխատանքի բաշխումը ՈԱ գործընթացներում հստակ չէ, ՈԱ աշխատակիցների և ֆակուլտետային պատասխանատուների կատարողականի գնահատում և կարիքների վերհանում չի իրականացվում: Օպերատորը, թարգմանիչը և համակարգչային ծրագրավորողը չեն կարող դիտարկվել որպես որակի ապահովման գործընթացների մասնագետներ, ավելին՝ նրանցից մեկն աշխատում է համատեղությամբ: Հարկ է նաև հավելել, որ բացի բուհի որակի ապահովման գործընթացների կառավարման գործառույթներից, ՈԱ բաժինն իրականացնում է իր տիրույթից դուրս գործառույթներ:

ՖԿՀՊԻ որակի ներքին ապահովման համակարգը կայացման փուլում է, և դեռևս բացակայում են որակի ապահովման գործընթացների կառավարման համար առկա ռեսուրսներից բավարարվածության վերլուծությունները:

10.3 Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՖԿՀՊԻ-ին փորձում է ապահովել նրանով, որ ներքին շահակիցները՝ ուսանողները, դասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչները մասնակցում են որակի ապահովման գործընթացներին՝ ներգրավված լինելով որակի ապահովման տարբեր հանձնաժողովներում, ինչպես նաև տրամադրվող դասընթացների գնահատման և կրթական միջավայրից բավարարվածության աստիճանի որոշման հարցումներին: Այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների ժամանակ արտաքին շահակիցները նշեցին, որ մասնակցում են պրակտիկաների կազմակերպման և պետական քննական հանձնաժողովների աշխատանքներին, որը և բուհը դիտարկում է մասնակցություն որակի ապահովման գործընթացներին: Այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներն այնքան էլ ներգրավված չեն բուհում որակի ապահովման գործընթացներին:

10.4 ՖԿՀՊԻ-ում որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է: ՖԿՀՊԻ-ն մատուցած ծառայությունների որակն ապահովելու նպատակով իրականացնում է որոշակի գործընթացներ՝ որակի ապահովման հանձնաժողովի ձևավորում և հայեցակարգի սահմանում, որակի ներքին ապահովման ուղեցույցի և քաղաքականության մշակում և սահմանում, այնուամենայնիվ, կարելի է փաստել, որ որակի ապահովման համակարգը դեռևս նոր է կանոնավորվում, հիմնականում պլանավորում փուլում է, գնահատման գործիքները և մեխանիզմները նոր են ստեղծվում, ՊԻԳԲ շրջափուլը դեռևս փակված չէ:

ՖԿՀՊԻ-ն դեռևս չի իրականացրել որակի ապահովման համակարգի ներքին գնահատում: ՖԿՀՊԻ-ում որակի ապահովման համակարգի վերանայման համակարգված գործընթացի բացակայությունը թերևս բացատրվում է որակի ներքին համակարգի դեռևս կայացման փուլում գտնվելով:

10.5 ՖԿՀՊԻ-ն փորձում է ինքնավերլուծության զեկույցի միջոցով ապահովել բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար: Սակայն, եթե անգամ ինքնավերլուծության զեկույցը դիտարկենք որպես որակի ապահովման ներքին գնահատում՝ ազգային մակարդակում արտաքին գնահատում իրականացնելու նպատակով, ապա կարելի է փաստել, որ այն հաճախ բավարար հիմքեր, իսկ որոշ դեպքերում համապատասխան հստակ տեղեկատվություն և առավելապես վերլուծություն չի ներկայացնում, ինչը խոչընդոտում է արտաքին գնահատման արդյունավետ գործընթացին:

ՖԿՀՊԻ-ում դեռևս մշակված չեն տեղեկատվական տվյալների հավաքագրմանը ներկայացվող պահանջները, որի հիման վրա որակի ներքին ապահովման համակարգը կարող է վերլուծել ինստիտուտում իրականացվող գործընթացների արդյունավետությունը: ՖԿՀՊԻ-ն նախատեսում է հետագայում կազմակերպել ՈԱ ներքին համակարգի գործունեության մշտադիտարկման և աուդիտի գործառույթները:

10.6 ՖԿՀՊԻ-ի որակի ապահովման գործընթացի թափանցիկության ապահովումը, որպես համակարգի բաղադրիչ, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների առջև դեռևս պլանավորվող գործընթացների փուլում է:

Թափանցիկությունն ապահովվում է որոշ փաստաթղթերի և հաշվետվությունների հանրային մատչելիությամբ: Ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրման և գործընթացների թափանցիկության ապահովման հիմնական գործիքներից են ՄՈՒՀ-ի պաշտանական կայքը, պաշտոնաթերթը: Ներքին շահակիցների համար տեղեկատվության թափանցիկության միջոց ՄՈՒՀ-ը համարում է նրանց ներգրավվածությունը կառավարման, գիտական և ֆակուլտետային խորհուրդներում:

Թեև ՄՈՒՀ-ն ինստիտուտի կայքէջում ամրագրել է տեղեկատվություն հաստատության վերաբերյալ (տարեկան հաշվետվություն, ՌԾ, ուսումնական ծրագրեր, կանոնակարգեր), այնուամենայնիվ, այն լիովին չի արտացոլում ինստիտուտի ծավալած գործունեությունն, ինչը վկայում է, որ թափանցիկությունը դեռևս լիարժեք չէ և ունի կատարելագործման անհրաժեշտություն: Փաստացի կրթական ծրագրերի և հաստատության որակի ապահովման գործընթացների վերաբերյալ հաշվետվությունները դեռևս հանրային մակարդակով հասանելի չեն:

Դատողություններ: Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ը մշակել է ՈԱ ուղեցույց, առկա են որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր՝ ուղղված կրթական գործընթացի որակի բարելավմանը, կատարում է որոշակի քայլեր դրանց իրագործման նպատակով, այնուամենայնիվ, մի շարք ընթացակարգեր մշակվել են վերջերս և հստակեցված չեն կրթության որակը գնահատող մեխանիզմները, որոնց մշակումը հնարավորություն կտա գնահատելու հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավման և որակի մշակույթի ձևավորման ընթացքը, դատելու գործընթացների արդյունավետության վերաբերյալ:

ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային և նյութական ռեսուրսներ որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար, սակայն պարզ չէ, թե ինչքանով են այդ ռեսուրսները բավարար, ինչպես են սահմանված և բաշխված նրանց պարտականություններն ու գործառույթները, այս խնդիրը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ որակի ապահովման գործընթացների կառավարման և հետագա զարգացման տեսանկյունից:

Թեև ՄՈՒՀ-ը որակի ապահովման նպատակով աշխատանքներ է իրականացրել տվյալների հավաքագրման, գործիքների, մեխանիզմների մշակման առումով, սակայն դրանց վերլուծական մոտեցումների բացակայությունը, ինքնավերլուծության զեկույցում հաճախ ոչ համապատասխան և թերի տեղեկատվության ներկայացումը, իսկ որոշ դեպքերում անգամ

իրականացրած գործառույթների ոչ լիարժեք վերհանումը, խոչընդոտում է արտաքին գնահատման գործընթացին, ինչպես նաև ՊԻԳԲ շրջափուլի բարելավման փուլի իրականացմանը:

ՊԻԳԲ շրջափուլով որակի ապահովման գործընթացների նոր գործարկումը, այդ գործընթացներին արտաքին շահակիցների դեռևս մասնակից չդարձնելը, տեղեկատվության կառավարման համակարգի ոչ լիարժեքությունը և ոչ բավարար թափանցիկությունը կարող են խոչընդոտել ՄՈՒՀ-ի գործունեության շարունակական բարելավմանը:

ՄՈՒՀ-ում ձևավորվել է Որակի ապահովման խորհուրդ և Որակի ապահովման բաժին, իրականացվում են որոշակի գործընթացներ, այնուամենայնիվ վաղ է խոսել բուհում որակի ներքին ապահովման համակարգի, առավել ևս որակի մշակույթի կայացման մասին: Այն դեռ կայացման սկզբնական փուլում է, բացակայում են անհրաժեշտ հիմքեր ներքին վերլուծության և որակի ապահովման արտաքին գնահատման համար:

ՄՈՒՀ-ը դեռևս ինքն իր կողմից չի իրականացրել որակի ապահովման համակարգի ներքին գնահատում, որը կօգներ հասկանալ որակի կիրառվող մեխանիզմների թույլ կողմերը և վերանայել դրանք:

ՄՈՒՀ-ի կայքէջում տեղադրված տեղեկատվությունը դեռևս չի կարելի համարել լիարժեք, ինչը նվազեցնում է հաստատության կողմից ծավալած գործունեության թափանցիկությունը ներքին և, առավելապես, արտաքին շահակիցների առջև, ինչը կխոչընդոտի դիմորդների գրավման գործընթացին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղղությամբ ինստիտուտում իրականացվող քայլերը դեռ համակարգված չեն, առկա չեն ենթակառուցվածքային ընդհանրական որակի մշակույթին բնորոշ մոտեցումներ և գործելակերպ, որակի կառավարման ներդրված ՊԻԳԲ սկզբունքը բավարար չափով չի կիրառվում գործընթացներում, չկա որակի գործառույթների գնահատում, մշտադիտարկում և աուդիտ, թույլ է արտաքին շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին, կարելի է եզրակացնել, որ ՖԿՀՊԻ-ի որակի ապահովման ներքին համակարգը չի նպաստում որակի մշակույթի ձևավորմանը և հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը:

Եզրակացություն: ՖԿՀՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
I. Առաքելություն և նպատակներ	**Բավարար**
II. Կառավարում և վարչարարություն	**Անբավարար**
III. Կրթական ծրագրեր	**Բավարար**
IV. Ուսանողներ	**Բավարար**
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարար**
VI.Հետազոտություն և զարգացում	**Բավարար**
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարար**
VIII. Հասարակական պատասխանատվություն	**Բավարար**
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Անբավարար**
X. Որակի ներքին ապահովման համակարգ	**Անբավարար**

Մկրտիչ Ավագյան

Փորձագիտական խմբի ղեկավար **05.05.2016թ.**

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մկրտիչ Ավագյան՝ 1977թ.-ին ավարտել է Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը (որակավորումը՝ անգլերեն և ֆրանսերեն լեզուների մասնագետ, ուսուցիչ), իսկ 2000թ.-ին՝ Չիկագոյի Իլինոյսի պետական համալսարանը (որակավորումը՝ ամերիկագետ): Փիլիսոփայական գիտությունների թեկնածու է, լեզվաբանության դոցենտ: Պաշտպանել է ատենախոսություն «Փաստարկում և լեզու» թեմայով: 1979 թվականից դասավանդել է Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում, 2010թ.-ից առ այսօր Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: 1987թ.-ից հանդիսացել է Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարաի ուսումնական բաժնի վարիչ, Օտար լեզուների ֆակուլտետի դեկան, պրոռեկտոր: 2011թ-ից. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթական բարեփոխումների և որակի ապահովման վարչության պետն է: Հեղինակ է 2 բուհական, 1 դպրոցական դասագրքերի, ունի 30-ից ավել հոդված լեզվաբանական, ամերիկագիտության, բրիտանագիտության և կրթության կառավարման ոլորտներում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՏԱՍԻՍ, ՏԵՄՊՈՒՍ ծրագրերի շրջանակներում մասնակցել է շուրջ 30 միջազգային գիտաժողովների՝ նվիրված կրթության արդի բարեփոխումներին, որակի ապահովման խնդիրներին: Մասնակցել է ՀՊՄՀ որակի ապահովման, ինքնավերլուծության իրականացման աշխատանքներին:

Յոհան Քլութ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր է: Ընդգրկված է եղել Համալսարանի քոլեջների ֆլամանդական խորհրդի ղեկավար հանձնաժողովում, նախագահել նույն խորհրդի կրթության քաղաքականության հարցերով զբաղվող խումբը: Ինստիտուցիոնալ գնահատման ծրագրի շրջանակներում 2013թ.-ին ընտրվել է Եվրոպական համալսարանների ասոցիացիայի գնահատման խմբի անդամ: Հանդիսացել է Բելգիայի Բրյուսելի շրջանի կառավարության նախարարի խորհրդական: 2008-2012թթ. եղել է Անտվերպենի «Լեսիուս» համալսարանի գլխավոր տնօրեն (ռեկտոր), ինչպես նաև «Թոմաս Մորի» համալսարանի գլխավոր փոխտնօրեն (պրոռեկտոր): 2014թ.-ից Բարձրագույն ուսումնական հաստատությունների եվրոպական ասոցիացիայի գլխավոր քարտուղարն է:

Գայանե Մարմարյան՝ 1995թ.-ին ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիան: 1995-1998թթ. ուսանել է է նույն բուհի ասպիրանտուրայում «Կենսաքիմիա» մանագիտությամբ: Կենսաբանական գիտությունների դոկտոր է, կենսաբանության դոցենտ: 1998թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀԱԱՀ կենսաքիմիայի ամբիոնում: 1995թ.-ից ի վեր ծավալում է գիտաարտադրական աշխատանքներ ՀՀ տարբեր մարզերում: Հեղինակ է 49 գիտական աշխատությունների՝ 37 գիտական հոդված, 1 մենագրություն (Գերմանիա), 9 մեթոդական ցուցում, 1 ուսումնական ձեռնարկ, 1 դասագիրք: Գիտական հետազոտությունները վերաբերում են մթերքների կենսաքիմիական և քիմիական կազմի ուսումնասիրմանը:

Սոնա Սարգսյան՝ 2004թ.ին ավարտել է Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը (ԵՊԲՀ), շնորհվել է օրդինատորի աստիճան ԼՕՌ հիվանդություններ մասնագիտությամբ: Բժշկական գիտությունների թեկնածում է, դոցենտ: 2014թ.-ից դասավանդում է ԵՊԲՀ ԼՕՌ հիվանդությունների ամբիոնում: 2012թ.-ից առ այսօր աշխատում է «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնում: Մասնակցել է տարաբնույթ

վերապատրաստումների, փոխանակման ծրագրերի, գիտաժողովների ՀՀ-ում և արտերկրում: Ուսումնական ձեռնարկների և դասագրքերի հեղինակ է:

Դավիթ Պետրոսյան՝ Հայաստանում Ֆրանսիական համալսարանի Կառավարման ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող է: Մասնակցել է Եվրամիության ՏԵՄՊՈՒՍ «ԷՄՊԱԿ» ծրագրին, ՈԱԱԿ-ի կողմից իրականացված ուսանող-փորձագետների վերապատրաստմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

21.03.2016թ.-24.03.2016թ.

	21.03.2016 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ինստիտուտի ռեկտորի հետ	09:30	10:00	30 րոպե
2.	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:10	11:10	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:20	12:20	60 րոպե
4.	Հանդիպում ֆակուլտետների դեկանների հետ	12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	14:30	15:30	60 րոպե
7.	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	15:40	16:40	60 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:10	80 րոպե

	22.03.2016 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ների) (10-12 հոգի)	10:40	11:40	60 րոպե
3.	Փաստաթղթերի ուսումնասիրություն	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Այցելություն դեկանատներ և փաստաթղթերի ուսումնասիրություն	14:10	15:40	90 րոպե
6.	Այցելություն ամբիոններ և փաստաթղթերի ուսումնասիրություն	15:50	17:10	90 րոպե
7.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	18:10	60 րոպե

	23.03.2016թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում բակալավրիատի ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի, առկա և հեռակա)	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի, առկա և հեռակա)	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, մարզասրահներ, լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, ամբուլատորիա)	14:10	15:40	90 րոպե

6.	Հանդիպումներ հաստատության ստորաբաժանումներում (կարիերայի կենտրոն, միջազգային կապերի բաժին, հաշվապահություն, կադրերի բաժին, գիտատեղեկատվական և գիտահետազոտական բաժիններ)	15:50	17:30	100 րոպե
7.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	18:40	60 րոպե

	24.03.2016 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Փաստաթղթերի ուսումնասիրություն	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	14:10	14:40	30 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:50	16:50	120 րոպե
7.	Հանդիպում ինստիտուտի ռեկտորի հետ	17:00	17:30	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Շ
1.	Ռազմավարական ծրագրի մշակման համար ներքին և արտաքին միջավայրերի, շահակիցների հետ իրականացված աշխատանքների վերլուծության մասին վկայող փաստաթղթեր	1.
2.	Ինստիտուտի տարեկան հաշվետվությունները/ռեկտորի և ստորաբաժանումների մեկ տարվա կտրվածքով/	1.
3.	Կառավարման խորհրդի, Գիտական խորհրդի, ռեկտորատի նիստերի արձանագրություններ, ռազմավարական ծրագրի ժամանակավոր հանձնաժողովի արձանագրություններ	1.
4.	2010-2013թ.-ի ՄՈՒՀ-ի կառավարման կառուցվածքային սխեման	2.
5.	Պաշտոնի անձնագրերի օրինակներ	2.
6.	Ինստիտուտում տպագրվող պաշտոնաթերթի օրինակներ,որտեղ շնորվող որակավորումների մասին կան տեղեկություններ	2.
7.	Դասախոսների և այլ շահակիցների կառավարման,գիտական խորհրդներում ընտրության ընթացակարգեր և հիմքեր /թափանցիկության ապահովում/	2.
8.	ԲՄԿ պետական կրթական չափորոշիչներ	3.
9.	Իրականացված բենչմարքինգի վերլուծության փաստաթուղթ	3.
10.	Ուսումնական գործընթացի կազմակերպման նորմերը	3.
11.	Ուսումնական գործընթացը կարգավորող կարգեր	3.
12.	Մեթոդական խորհրդի պլանը և արձանագրությունները	3.
13.	Գնահատման համակարգի արդյունավետության և ամբողջական պատկերը հասկանալու համար իրականացված փորձնական հարցման հավաստիության համապատասխան վերլուծություն	3.
14.	Ընդունելության թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը և հիմքերը հեռակա բաժնում	4.
15.	Ինստիտուտի մագիստրատուրայի ընդունելության կարգը	4.
16.	Ներբուհական համակարգով ընդունելության քննությունների գնահատման չափանիշներ	4.
17.	Խորհրդատուների միջոցառման պլանի, առաջադիմության և հաճախումների գրանցամատյանի օրինակեր	4.
18.	Ուսանողի հետ պայմանագրի օրինակ	4.
19.	Կարիերայի կենտրոնի բուհ-գործատու համագործակցային պայմանագրեր և տվյալների բազա	4.
20.	ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսում-նառողների մասնակցության ապահովման քաղաքականություն/ընթացակարգ	4.
21.	Ուսանող դասախոս համատեղ հոդվածների օրինակներ	4.
22.	ՈՒԳԸ կազմ և աշխատանքային պլան	4.
23.	Ղեկավարությանը դիմելու ուսանողների սահմանված կարգը և ժամանակացույցը	4.
24.	Ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն	5.
25.	Ժամահաշվարկի ամբիոնային օրինակներ	5.
26.	Դասախոսի,ասիստենտի,դոցենտի,պրոֆեսոր բեռնվածքի օրինակներ	5.

27.	Դասախոսների բազային կրթությունը, գիտական աստիճանը, դասավանդվող առարկաները և ոլորտում ծավալած աշխատանքային փորձը ըստ ամբիոնների տվյալներ	5.
28.	ՊԴԱ կազմի գործունեությանը վերաբերող որակի վարկանիշային գնահատման օրինակներ	5.
29.	Գիտամեթոդական կոնֆերանսի նյութերի ժողովածու	5.
30.	Մագիստրոսական թեզեր և ավարտական աշխատանքներ, դրանց թեմաները/ հինգ տարվա կտրվածքով/,աշխատանքների օրինակներ /դրական գնահատված և բացասական/, գրախոսություններ,արտաքին շահակիցների կարծիքներ	6.
31.	Մագիստրատուրայի թեզերի կատարման կարգը	6.
32.	Միջազգային գիտաժողովների ժողովածու	6.
33.	ԱՊՀ և օտարերկրյա միջազգային գրախոսվող, ցիտվող ամսագրերում հրապարակումների հստակ ցանկը /հիմքեր/	6.
34.	Ուսումնամեթոդական ձեռնարկներ	6.
35.	Գրադարան հաճախումների մասին տեղեկություններ	7.
36.	Ինստիտուտի բյուջեի բաշխումն ըստ ռազմավարական ուղղությունների	7.
37.	Ֆակուլտետներում պահպանվող փաստաթղթերի հաստատված ցանկ	7.
38.	Ամբիոններում պահպանվող փաստաթղթերի հաստատված ցանկ	7.
39.	Ամբուլատորիայի կանոնադրություն	7.
40.	Դասավանդման և կրթական ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգեր	7.
41.	Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի օրինանակներ,վերլուծություն, արդյունք	8.
42.	Հասարկությանը մատուցվող խորհրդատվական և կրթական լրացուցիչ ծառայությունների սոցիալական ազդեցության վերլուծություն	8.
43.	Միջազգային կապերի բաժնի գործունեության կատարողականներ և հաշվետվություններ	9.
44.	Փոխանակման ծրագրերին մասնակցած ուսանողների և դասախոսների ընդհանուր թիվ ներկայացնող փաստաթուղթ	9.
45.	Նախապատրաստական դասընթացներին արտասահմացի ուսանողների ընդգրկվածությունը վերջին հինգ տարիներին	9.
46.	Օտար լեզուներ տիրապիտող դասախոսների և ուսանողների տարակարգումը ըստ լեզուների	9.
47.	Բուհերի ցանկ և հավաստող պայմանագրեր, որոնց հետ ինստիտուտն ունի դիպլոմների, ուսումնական ծրագրերի փոխճանաչման և միասնական դասավանդման գործընթաց:	9.
48.	Դիպլոմի երկլեզու հավելվածի օրինակ	9.
49.	ՈԱ բաժնի գործունեության վերաբերյալ ղեկավարությանը ներկայացված հաշվետվություններ և բարելավման առաջարկություններ / մեկ տարվա կտրվածքով/	10.
50.	Որակի կենտրոնի ամենամյա աշխատանքային և հեռանկարային պլաններ	10.
51.	Գիտական խորհրդի նիստերի արձանագրություն (որտեղ գնահատվում է որակի քաղաքականության իրականացումը)	10.
52.	ՈԱ բաժնի կողմից իրականացված վերապատրաստումների մասնակիցների կողմից վերապատրաստման գնահատման համապատասխան վերլուծությունները	10.

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Լսարաններ
2. Դեկանատներ
3. Ամբիոններ
4. Ստորաբաժանումներ (կարիերայի կենտրոն, միջազգային կապերի բաժին, հաշվապահություն, կադրերի բաժին, ընդհանուր բաժին, պրակտիկայի բաժին, ուսումնական մաս)
5. Լաբորատորիաներ
6. Կաբինետներ
7. Մարզադահլիճներ
8. Մարզասրահներ
9. Համակարգչային լսարան
10. Ամբուլատորիա
11. Գրադարան
12. Ընթերցասրահ
13. Թանգարան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԳՀԿ**՝ գիտահետազոտական կենտրոն
2. **ԿԳՆ**՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն
3. **ԿԿ**՝ կարիերայի կենտրոն
4. **ԿՀՈԱ**՝ կրթական համակարգի որակի ապահովման բաժին
5. **ՀՀ**՝ Հայաստանի հանարապետություն
6. **ՄԿԾ** ՝մասնագիտության կրթական ծրագիր
7. **ՄՈՒՀ** ՝մասնագիտական ուսումնական հաստատություն
8. **ՈԱ** ՝որակի ապահովում
9. **ՈԱԱԿ**՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
10. **ՈԱԾ**՝ որակավորումների ազգային շրջանակ
11. **ՊԴԿ**՝ պրոֆեսորադասախոսական կազմ
12. **ՊԻԳԲ**՝ պլանավորել-իրականացնել-գնահատել-բարելավել
13. **ՌԾ**՝ Ռազմավարական ծրագիր
14. **ՏՏ**՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ
15. **ՈՒԽ** ՝Ուսանողական խորհուրդ
16. **ՖԿՀՊԻ**՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ